«ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ԶԵԿՈՒՅՑ

ԵՐԵՎԱՆԻ Վ.ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ՓՈՐՁՆԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ -2013

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՊԼՀ ՄԱՍԻՆ 2
ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ 3
ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ 3
ԵՊԼՀ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ 5
ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԸՍՏ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 12
I.ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ 12
II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ 13
III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ 16
IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ 18
V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ 20
VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ 22
VII ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ 24
VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ 27
IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ 29
X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ 30
ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ... 33
ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ 37
ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ 40
ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՅՑԵՐԸ 41
ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԵՐԸ 42

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՊԼՀ ՄԱՍԻՆ

Երևանի Վ.Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանը (ԵՊԼՀ) հիմնվել է 1935 թվականի փետրվարի 15-ին: Իսկզբանե ԵՊԼՀ-ն ստեղծվել է որպես ռուսաց լեզվի ուսուցիչներ պատրաստելու երկամյա մանկավարժական ինստիտուտ:

1940թ. երկամյա ինստիտուտը վերակազմվեց վերածվելով Պետական մանկավարժական ինստիտուտի:

1941թ. փետրվարին դպրոցներն օտար լեզվի մասնագետներով ապահովելու նպատակով ինստիտուտում բացվեցին օտար լեզուների (գերմաներեն, ֆրանսերեն և անգլերեն) երկամյա կուրսեր:

1948թ. մարտի 1-ին Երևանի ռուսական մանկավարժական ինստիտուտի օտար լեզուների ֆակուլտետի հիմքի վրա բացվեց Օտար լեզուների մանկավարժական ինստիտուտը:

1962թ. հունվարին Երևանի պետական համալսարանի ռուսաց և օտար լեզուների ֆակուլտետի հիմքի վրա ստեղծվեց Ռուսաց և օտար լեզուների մանկավարժական ինստիտուտ: 1962թ. մարտի 2-ին ինստիտուտը անվանվում է Վ.Բրյուսովի անվան ռուսաց և օտար լեզուների պետական մանկավարժական ինստիտուտ:

1980-ական թվականներին ինստիտուտը լայն ճանաչում ուներ ոչ միայն հանրապետությունում, այլև ողջ Խորհրդային Միությունում: Հայաստանի դպրոցներում ռուսաց և օտար լեզուներ դասավանդող ուսուցչական արհեստավարժ կադրերի պատրաստումը, ինստիտուտի ամբիոններում գիտահետազոտական աշխատանքների տարեցտարի ընդլայնվող ծավալը, միութենական մասշտաբով իրականացվող «Բրյուսովյան ընթերցումները», ակտիվ համագործակցությունը ԽՍՀՄ հանրապետությունների և արտասահմանյան երկրների մի շարք բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ նկատելիորեն բարձրացրեցին բուհի հեղինակությունը: 1985թ. մայիսի 14-ին որակյալ կադրերի պատրաստման և գիտության զարգացման համար ինստիտուտը պարգևատրվում է Ժողովուրդների բարեկամության շքանշանով:

1995թ. մարտի 17-ին ինստիտուտը վերանվանվում է Հայաստանի Վ. Բրյուսովի անվան օտար լեզուների պետական համալսարան, իսկ 5 տարի անց ՀՀ կառավարության որոշմամբ՝ Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարան:

Իր գործունեության ընթացքում համալսարանը պատրաստել է շուրջ 25000 մասնագետ՝ ռուսերենի, անգլերենի, ֆրանսերենի, գերմաներենի, իտալերենի, իսպաներենի, քաղաքագիտության, երկրագիտության, միջազգային տուրիզմի, միջազգային լրագրության և այլ մասնագիտությունների գծով:

Ներկայումս ԵՊԼՀ-ում մասնագիտանում է շուրջ 4 հազար ուսանող: Բուհի 383 դասախոսներից 12-ը գիտությունների դոկտոր են, 12-ը՝ պրոֆեսոր, 145-ը գիտությունների թեկնածու և 81-ը դոցենտ:

Ուսումնական գործընթացը համակարգվում է Ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի կողմից, ում ենթակայության տակ են գտնվում՝ Օտար լեզուների, Միջմշակութային հաղորդակցման և Ռուսաց լեզվի, գրականության և օտար լեզուների ֆակուլտետները, Մագիստրոսական ծրագրերի իրականացման դեպարտամենտը, Ուսումնական գործընթացի համակարգման և Հեռակա ուսուցման բաժինները, Լրացուցիչ և շարունակական կրթության կենտրոնը և Տեղեկատվական տեխնոլոգիաների վարչությունը:

Հետազոտական և միջազգային կապերի հաստատման ուղղությամբ իրականացվող աշխատանքները համակարգվում են Գիտության և միջազգային կապերի գծով պրոռեկտորի կողմից: Այդ ենթահամակարգում են Միջազգային կապերի վարչությունը, Գիտքարտուղարը, Ասպիրանտուրայի վարիչը, Գրադարանը և Հրատարակչական խորհուրդը:

Ֆինանսական և տնտեսական ապահովման գծով աշխատանքները դրված են Վարչատնտեսական և սոցիալական հարցերով պրոռեկտորի վրա: Նրա ենթակայության տակ են՝ Շենք, շինությունների և ենթակառուցվածքների շահագործման վարչությունը, Հաշվապահությունը, Մատակարարման բաժինը, Կարիերայի կենտրոնը, Տպարանը, Ծաղկաձորի հանգստյան տունը, Ավտոտնտեսությունը, Բուժ. կետը և Ճաշարանը:

Ռեկտորի աշխատակազմի ղեկավարը համակարգում է Կադրերի և Իրավաբանական բաժինների, Գրասենյակի և Արխիվի աշխատանքները:

ԵՊԼՀ-ում գործող **Որակի ապահովման կենտրոնը**, ինչպես նաև «Կոնֆուցիուսի ինստիտուտը», Ռուսաց լեզվի և մշակույթի կենտրոնը, Հանրային կապերի բաժինը, Անվտանգության ապահովման ծառայությունը գտնվում են ռեկտորի անմիջական ենթակայության տակ:

ԵՊԼՀ-ում գործում են նաև՝ Արհմիութենական կազմակերպություն, Ուսանողական խորհուրդ, Շրջանավարտների միություն և Ֆրանկոֆոնիայի թվայնացման տեղեկատվական կենտրոն:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ

Երևանի պետական լեզվաբանական համալսարանի ինքնավերլուծության, կրթական և որակի ապահովման գործընթացների արտաքին գնահատում իրականացրած փորձագիտական խմբի կազմն է.

- Դոց. Լիլիթ Զաքարյան, ՀՀ, փորձագիտական խմբի ղեկավար;
- Պրոֆ. Դեվիդ Թիմս, Մեծ Բրիտանիա;
- Պրոֆ. Ելենա Երզնկյան, ՀՀ;
- Դոց. Աղավնի Հակոբյան, ՀՀ;
- Ուսանող Անի Գասպարյան, ՀՀ:

Փորձագիտական խմբի աշխատանքները համակարգել է ՈԱԱԿ-ի Ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման բաժնի մասնագետ, դոց. Մկրտիչ Այվազյանը:

Հավելված 1-ը պարունակում է փորձագիտական խմբի կազմի համառոտ ինքնակենսագրությունները:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Նախապատրաստական փուլ

Ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնելու համար Երևանի Վ.Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանը դիմել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամ (ՈԱԱԿ)՝ լրացնելով սահմանված ձևաչափի դիմումը և ներկայացնելով լիցենզիայի և դրա հավելվածների կրկնօրինակները:

ՈԱԱԿ քարտուղարությունն ուսումնասիրել է դիմում-հայտում ներկայացված տվյալները, կից փաստաթղթերը և հաստատության կողմից լրացված ՈԱԱԿ-ի էլեկտրոնային հարցաշարը:

Դիմում-հայտի ընդունման մասին որոշում ընդունելուց հետո ՈԱԱԿ-ի, Կրթական ծրագրերի կենտրոնի և բուհի միջև կնքվել է եռակողմ պայմանագիր: Կազմվել և հաստատվել է աշխատանքների իրականացման ժամանակացույց:

Ժամանակացույցով նախատեսված ժամկետներում հաստատությունը ներկայացրել է ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը հայերեն և անգլերեն լեզուներով ըստ ՈԱԱԿ-ի սահմանած ձևաչափի, ինչպես նաև ուղեկցող փաստաթղթերի փաթեթը:

ԵՊԼՀ ինքնավերլուծությունն իրականացրել է հատուկ այդ նպատակով ձևավորված խումբը:

Ինքնավերլուծության վերաբերյալ ՈԱԱԿ-ի տնօրենի հրամանով նշանակված հավատարմագրման գործընթացի համակարգողի դրական կարծիքը ստանալուց հետո՝ քարտուղարությունը այն ուսումնասիրման համար տրամադրել է փորձագիտական խմբին, որի կազմը նախօրոք համաձայնեցվել է ԵՊԼՀ-ի հետ և հաստատվել ՈԱԱԿ-ի տնօրենի հրամանով:

Փորձագետները, ուսումնասիրելով համալսարանի ինքնավերլուծությունը և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը և նախապատրաստվելով փորձագիտական այցի՝ լրացրել են նախնական գնահատման ձևաչափը՝ իրականացնելով ինքնավերլուծության նախնական գնահատում, կազմելով ուսումնասիրման ենթակա խնդիրների և հարցերի ցանկը, ինչպես նաև այն ստորաբաժանումների կամ շահառուների խմբերի ցուցակը, որոնց հետ հանդիպումների ժամանակ հնարավոր է ստանալ առաջացած հարցերի պատասխանները:

Նախնական այց

Գործընթացի համակարգողը փորձագիտական խմբի անդամների կողմից դուրս բերված ուսումնասիրման ենթակա հարցերի և խնդիրների հիման վրա փորձագիտական խմբի ղեկավարի հետ կազմել է այցի ժամանակացույց, որը համաձայնեցվել է հատատության հետ համակարգողի և խմբի ղեկավարի կողմից իրականացված նախնական այցի ժամանակ: Առաջնորդվելով ՈԱԱԿ-ի Փորձաքննության իրականացման ձեռնարկով՝ ժամանակացույցում ներառվել են փորձագետների կողմից նախատեսվող հանդիպումները բոլոր խմբերի հետ, փաստաթղթերի ուսումնասիրություն, այցելություններ հաստատության ստորաբաժանումներ և այլն: Համաձայնեցվել են խմբին տրամադրվող աշխատասենյակը, հանդիպումների դահլիճը և անհրաժեշտ տեխնիկական միջոցները:

Փորձագիտական այց

Երևանի Վ.Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանում ինստիտուցիոնալ հավատարմագրման շրջանակներում 2013թ. մայիսի 13-ից մայիսի 17-ը ընկած ժամանակահատվածում իրականացվեց փորձագիտական այց (այցի ժամանակացույցը ներկայացված է **Հավելված 2**-ում):

Փորձագիտական խումբը ղեկավարում էր ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող, Երևանի Հյուսիսային համալսարանի որակի ապահովման վարչության պետ, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Լիլիթ Զաքարյանը:

Այցի ընթացքում փորձագիտական խումբն ունեցավ ծրագրով նախատեսված հանդիպումները ներքոհիշյալ անձանց հետ.

- ռեկտոր,
- ինքնավերլուծությունն իրականացրած աշխատանքային խումբ,
- ուսանողներ,
- դասախոսներ,
- որակի ապահովման կենտրոնի աշխատակիցներ,
- պրոռեկտորներ և դեկաններ,

- ամբիոնների վարիչներ,
- միջազգային կապերի վարչության աշխատակիցներ,
- մագիստրոսական ծրագրերի իրականացման դեպարտամենտի աշխատակիցներ,
- շարունակական և լրացուցիչ կրթության կենտրոնի և կարիերայի կենտրոնի աշխատակիցներ,
- ուսանողական խորհրդի ներկայացուցիչներ:

Կազմակերպվեց նաև հանդիպում, որի ընթացքում փորձագիտական խմբի հետ կարող էին հանդիպել բոլոր ցանկացողները: Հանդիպմանը ներկա էր համալսարանի շուրջ քսան աշխատակից, ինչպես նաև ուսանողության ներկայացուցիչներ: Հանդիպումների ժամանակ ԵՊԼՀ-ի աշխատակիցները և ուսանողները բարձրացրեցին իրենց հուզող հարցերը, որոնց այցի ընթաքում իրենց կարծիքով փորձագետները չէին անդրադարձել, սակայն դրանք կարևոր էին ԵՊԼՀ-ում ընթացող գործընթացները ճիշտ հասկանալու համար:

Այցի ընթացքում փորձագետներն իրականացրեցին նաև փաստաթղթերի ուսումնասիրություն համալսարանի ֆակուլտետներում, ուսումնական վարչությունում, ընդհանուր բաժնում, իրավաբանական բաժնում, ինչպես նաև մի շարք ամբիոններում:

Փորձագիտական զեկույց

Այցից հետո փորձագետները քննարկեցին ինստիտուցիոնալ հավատարմագրման յուրաքանչյուր չափորոշիչը, շտկումներ մտցվեցին չափորոշիչների վերաբերյալ դատողությունների և եզրակացությունների մեջ: Փորձագետների քննարկման արդյունքում կազմվեց զեկույցի նախնական տարբերակը:

«ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման կարգի» համաձայն՝ համալսարանին հնարավորություն տրվեց երկշաբաթյա ժամկետում փորձագիտական զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ ՈԱԱԿ-ին ներկայացնել իր դիտողություններն ու առարկությունները՝ համապատասխան հիմնավորումներով:

Փորձագիտական խումբը համալսարանի դիտողություններին ու առարկություններին ծանոթանալուց հետո կազմեց վերջնական փորձագիտական զեկույցը Հավատարմագրման հանձնաժողովի քննարկմանը ներկայացնելու համար:

ԵՊԼՀ ԻՆՍՏԻՏՈՒՏԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ. ԵՊԼՀ-ի վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը ամբողջությամբ չեն արտացոլված համալսարանի առաքելության մեջ: Առաքելության մեջ ընդգծվում է ԵՊԼՀ-ի գործունեության լեզվաբանական ուղղվածությունը, երկար տարիներ իրականացված մանկավարժական ուղղվածությամբ գործունեությունը անտեսված է: Չնայած ՈԱՇ-ի մակարդակները արտացոլված չեն առաքելության մեջ, քանի որ այն հաստատվել է մինչև ՈԱՇ-ի հաստատումը, Ռազմավարական ծրագրում նշվում է, որ բուհը կրթություն է կազմակերպում բակալավրի, մագիստրոսի և հետազոտողի կրթական մակարդակներում:

Հաստատության պլանավորման գործընթացը տեղի է ունենում ներքին շահակիցների կարիքների հաշվառմամբ:

ԵՊԼՀ-ում առաքելության ու նպատակների իրականացման արդյունքների գնահատման և բարելավման հաստատված հստակ մեխանիզմներն ու ընթացակարգերը դեռևս բացակայում են:

ՉԱՓԱՆԻՇ II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ. ԵՊԼՀ-ն ունի կառավարման հստակ համակարգ: Առկա են կառավարման մարմինների ընտրության, գիտական և ուսումնական ստորաբաժանումների ղեկավարների պաշտոնների զբաղեցման հստակ կարգեր: ԵՊԼՀ-ն ունի անհրաժեշտ մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ:

ԵՊԼՀ-ի կառավարման համակարգը հնարավորություն է տալիս դասախոսներին և ուսանողներին Կառավարման, Գիտական և ֆակուլտետային խորհուրդներում ներգրավվածության միջոցով մասնակցել իրենց առնչվող որոշումների կայացմանը:

Համալսարանն ունի ռազմավարական ծրագիր: Սակայն միջնաժամկետ և կարճաժամկետ ծրագրերը միշտ չէ, որ կապված են Ռազմավարական ծրագրի հետ:

Բուհի գործունեության վրա ազդող գործոնների ոչ լիարժեք ուսումնասիրության հետևանքով կայացվող որոշումները չեն հիմնվել հավաստի տվյալների վրա:

ԵՊԼՀ-ի քաղաքականությունը և ընթացակարգերը պլանավորվում են, իրականացվում, սակայն գնահատման գործընթացները մասամբ են իրագործվում, իսկ բարելավման գործընթացները հիմնականում հիմնված չեն գնահատման արդյունքների վրա:

ԵՊԼՀ-ում մասնագիտությունների կրթական ծրագրերի և այլ գործընթացների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը, վերլուծությունը և կիրառումը գնահատող մեխանիզմները բացակայում են: Միևնույն ժամանակ Հանրային կառավարման մագիստրոսական կրթական ծրագրի արդյունավետության վերաբերյալ կիրառվել է գնահատման պիլոտային մեխանիզմ:

Թեպետ բուհում կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին կան քանակական և որակական տեղեկատվության մեծ թվով հրապարակումներ, սակայն դրանց գնահատող մեխանիզմները բացակայում են:

ՉԱՓԱՆԻՇ III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ.

ԵՊԼՀ-ում դասընթացների մակարդակով առկա են հստակ ձևակերպված ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքներ: Սակայն ընդհանուր ՄԿԾ-ի մակարդակում վերջնարդյունքները հստակ ձևակերպված չեն:

ԵՊԼՀ-ում կիրառվում են դասավանդման և ուսումնառության բազմազան մեթոդներ, որոնք հիմնականում նպաստում են դասընթացների վերջնարդյունքների ձևավորմանը:

Համալսարանում գնահատվում են հիմնականում տեսական գիտելիքները:

Բուհում դեռ չի ձևավորվել ակադեմիական ազնվության ամբողջական ըմբռնում:

ԵՊԼՀ-ի ուսանողների ու դասավանդողների շարժունությունը բարձր չէ: Միևնույն ժամանակ ԵՊԼՀ-ն քայլեր է կատարում միջազգայնացման ուղղությամբ:

ԵՊԼՀ-ում իրականացվում է «Մանկավարժություն» մասնագիտությունը, որը ՀՀ կառավարության 2007 թ. օգոստոսի 30-ի N 1038-Ն որոշման ցանկում բակալավրիատի մակարդակում բացակայում է: «Մանկավարժություն» մասնագիտությունը բուհի առաքելության մեջ հստակ արտահայտված չէ, սակայն կա ՌԾ-ում:

ՉԱՓԱՆԻՇ IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ. ԵՊԼՀ-ում գործում են ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության իրականացման հստակ մեխանիզմներ:

ԵՊԼՀ-ն ունի ուսանողների կարիքների վերհանմանը և բավարարմանը նպաստող մի շարք կարգեր: ԵՊԼՀ-ում մշակվել են «Ուսանողների բավարարվածության գնահատում» հարցաշարեր, կատարվել է փորձնական հարցում:

Բուհը ստեղծում է լրացուցիչ պարապմունքների կազմակերպման և խորհրդատվություն տրամադրելու հնարավորություններ, խորհրդատվությունները իրականացվում են ըստ սահմանված ժամանակացույցերի: Ստեղծված է այնպիսի միջավայր, որը թույլ է տալիս ոչ միայն ֆորմալ, այլև ոչ ֆորմալ մակարդակով ապահովել տեղեկատվության հասանելիություն և գործունեության թափանցիկություն:

ԵՊԼՀ-ում սահմանված է ուսանողներին օժանդակություն և ուղղորդում տրամադրելու նպատակով վարչական աշխատակազմին դիմելու հստակ կանոնակարգ և ժամանակացույց, սակայն ուսանողները չեն հետևում դրանց և վարչական աշխատակազմին են դիմում անկախ ժամանակացույցից՝ ըստ առաջացած կարիքների:

Բուհում ստեղծվել է Կարիերայի կենտրոն, որը պարբերաբար իրականացնում է գործատուների հանդիպումներ ԵՊԼՀ ուսանողների հետ: Կարիերայի կենտրոնի կողմից տրամադրվող տեղեկատվության հասանելիությունը ուսանողներին ապահովվում է էլ. փոստի և ֆեյսբուքյան էջի միջոցով:

Համալսարանում չկան հստակ մեխանիզմներ, որոնք կապահովեին ուսանողների ներգրավումը հաստատության գիտահետազոտական աշխատանքներում:

ԵՊԼՀ-ում ուսումնառողների իրավունքների պաշտպանության համար պատասխանատու են ռեկտորը, դեկանները, ուսանողական խորհուրդը:

ՉԱՓԱՆԻՇ V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ.

ԵՊԼՀ-ն ունի կրթական ծրագրերն իրականացնելու պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ընտրության քաղաքականություն և ընթացակարգեր:

ԵՊԼՀ-ն առանձին ՄԿԾ-ների համար չի սահմանել պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող հստակ պահանջներ:

Համալսարանում դասախոսներին գնահատելու համար գործում են մի քանի գործիքներ. դասալսումներ, դասավանդման արդյունավետության և որակի վերաբերյալ ուսանողական հարցումներ, դասախոսների անհատական հաշվետվություններ, բաց դասեր և այլն:

ԵՊԼՀ-ն իրականացնում է դասավանդողների կատարելագործմանն ուղղված որոշ աշխատանքներ, սակայն դրանք համակարգված չեն: ԵՊԼՀ-ն պրոֆեսորդասախոսական կազմի շրջանում չի կատարել կարիքների հատուկ վերհանում: Դասախոսական կազմի շրջանում վերապատրաստման համակարգի արդյունավետության վերաբերյալ հարցումներ չեն իրականացվել:

Համալսարանում պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստումները համակարգված բնույթ չեն կրում, ինչի արդյունքում առկա են ամբիոններ, որոնք ունեն վերապատրաստման բարձր արդյունքներ, սակայն կան նաև ամբիոններ, որոնց ցուցանիշները այդ առումով բավականին ցածր են: Որպես կանոն վերապատրաստումները իրականացվում են դասախոսների նախաձեռնությամբ, դրամաշնորհների շրջանակներում:

Համալսարանում առկա են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման որոշակի ընթացակարգեր, որոնք սակայն դեռ չեն գործում:

ՉԱՓԱՆԻՇ VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ. Համալսարանում առկա է հետազոտական ոլորտում իր հետաքրքրությունները և հավակնություններն արտահայտող որոշակի քաղաքականություն: Ռազմավարական ծրագրում արտահայտված են ԵՊԼՀ-ի առաջնահերթությունները գիտության ոլորտում: Ամբիոնները ունեն գիտական հետազոտությունների պլաններ, հաստատում են գիտահետազոտական աշխատանքների թեմատիկան, իրականացնում դրանց մշտադիտարկումն ու քննարկումը: ԵՊԼՀ-ն ունի հրատարակվող գիտական ամսագրեր, ժողովածուներ և այլն:

Հետազոտությունների մշտադիտարկման միակ գործիքը տարեկան հաշվետվություններն են: ԵՊԼՀ-ն ունի հետազոտության ոլորտի միջնաժամկետ ու կարճաժամկետ ծրագրեր, արտահայտված դասախոսների անհատական պլանների, ինչպես նաև ամբիոնների, գիտակրթական կենտրոնների պլանների մեջ: Լիարժեք չեն օգտագործվում միջազգային դրամաշնորհային ծրագրերի, հետազոտական գործունեության համար լրացուցիչ ֆինանսավորում ստանալու հնարավորությունները:

ԵՊԼՀ-ն իր ռազմավարական ծրագրում կարևորում է հետազոտական գործունեության միջազգայնացումը: Գիտական հետազոտությունների միջազգայնացման ուղղությամբ բուռն ձևավորել է տարբեր գիտական կենտրոններ, շարունակական դարձնելով գիտական միջոցառումների անցկացումը, հնարավորինս ապահովվում է օտարերկրյա գիտնականների մասնակցությունը: Գիտական ոլորտում միջազգային համագործակցության ապահովման նպատակով գործընկեր համալսարանների հետ կազմակերպվում են համատեղ հետազոտություններ, որոնց արդյունքները տպագրվում են միջազգային գիտական հանդեսներում: Սակայն այդ ուղղությամբ համալսարանը դեռ գոհացուցիչ արդյունքների չի հասել՝ Հայաստանից դուրս հրատարակված հոդվածների ցանկը համեմատաբար սահմանափակ է:

Հետազոտության և դասավանդման կապի ապահովման մեխանիզմները չեն մշակվել:

ՉԱՓԱՆԻՇ VII ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ. ԵՊԼՀ-ն ապահովում է ՄԿԾ-երի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայր, որը ներառում է շենքային և գույքային պայմանները, գրադարանը, տեղեկատվական և հաղորդակցական սարքավորումները: ԵՊԼՀ-ում ստեղծված են պայմաններ անվտանգության և առողջության պահպանման համար, սակայն սննդի կազմակերպման և մարզական պայմանները բարելավման կարիք ունեն:

ԵՊԼՀ-ում առկա է ֆինանսական ռեսուրսների բաշխման հստակ սահմանված գործընթաց: ԵՊԼՀ-ի ծախսերի պլանավորումը կատարվում է նպատակների իրականացման տեսանկյունից, տարեկան բյուջեի նախահաշիվ կամ կատարողական կազմելիս բուհը չի առաջնորդվում ռազմավարական գերակա ուղղություններով, այլ դրա համար հիմք է ընդունում նախորդ ֆիսկալ տարվա ընթացքում կատարված ծախսերն ու ապահովված մուտքերի համամասնությունը: Յուրաքանչյուր ֆինանսական տարվա գործունեությունը ենթարկվում է պարտադիր արտաքին ֆինանսական աուդիտի, որի արդյունքները հրապարակվում են ԵՊԼՀ ինտերնետային կայքում: Համալսարանի եկամուտների մեծ մասը գոյանում է ուսման վարձերից: Միևնույն ժամանակ վերջին տարիներին համալսարանում փորձեր են արվում գտնել ֆինանսավորման այլ աղբյուրներ: Համալսարանին հաջողվել է աջակցություն ստանալ օտարերկրյա պետությունների կառավարություններից և դեսպանատներից, որոնց շնորհիվ հարստացվել են դասախոսներին և ուսանողներին տրամադրվող ռեսուրսները: Ռեսուրսները համալրվել են նաև տեղական բիզնեսի շնորհիվ: ԵՊԼՀ ֆինանսական ռեսուրսների բաշխման արդյունավետության գնահատման գործիքները դեռևս մշակված չեն:

Քանի որ բյուջեի բաշխումը փոխկապակցված չէ ռազմավարական ծրագրի հետ, դժվար է գնահատել համակարգի կայունությունը: ԵՊԼՀ-ում կրթական ծրագրերի գծով առանձին ֆինանսական միջոցների վերաբերյալ փաստաթղթեր չեն նախատեսվում և կրթական ծրագրի ապահովման համար առանձին ֆինանսական հատկացումներով պայմանավորված պլանավորում չի կատարվում: Չնայած գործող մասնագիտությունների կրթական ծրագրերի նպատակների իրականացումն ու շարունակականությունն ապահովող ընթացակարգերը և մեխանիզմները ֆորմալ առումով կանոնակարգված և ամրագրված չեն, սակայն դրանք ԵՊԼՀ-ում փաստացի գործում են:

ԵՊԼՀ-ում գործում են նաև պահնորդային ծառայությունները և քաղաքացիական պաշտպանության կառույցը: Համալսարանը չի ապահովում անհրաժեշտ պայմաններ հատուկ կարիքներ ունեցող ուսանողների համար:

Բուհում որպես ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման մեխանիզմներ հանդես են գալիս հարցումները, որոնք սակայն բավարար չեն ռեսուրսների արդյունավետությունը, կիրառելությունը և հասանելիությունը գնահատելու համար:

ՉԱՓԱՆԻՇ VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ. ԵՊԼՀ-ն ապահովում է իր գործունեության թափանցիկությունը ռեկտորի տարեկան հաշվետվություններով և բոլոր պաշտոնական փաստաթղթերը ԵՊԼՀ-ի կայքում տեղադրելով: Կայքը կիրառվում է նաև որպես հասարակության հետ հետադարձ կապի գործիք: ՁԼՄ-ների հետ համագործակցություն ապահովելու և այն զարգացնելու նպատակով ԵՊԼՀ-ն համագործակցության պայմանագիր է կնքել Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերության հետ:

ԵՊԼՀ-ում գործում են հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի կայուն մեխանիզմներ: Համալսարանում գործում է Հանրային կապերի բաժինը: Բուհը ակտիվ կապեր ունի դեսպանատների, դպրոցների, հասարակական կազմակերպությունների և հասարակության այլ ներկայացուցիչների հետ:

Համալսարանում գործում են բազմաթիվ կենտրոններ, որոնք հասարակությանը տրամադրում են մի շարք բազմաբնույթ ծառայություններ: Այդ կենտրոնները որպես գիտելիքի (արժեքների) փոխանցման հիմնական մեխանիզմներ՝ ապահովում են հասարակությանը

լրացուցիչ և շարունակական կրթության հնարավորությունով: Լրացուցիչ և շարունակական կրթության արդյունավետ համակարգ ներդնելու նպատակով ԵՊԼՀ-ում մշակվել են կրթական երեք՝ *լեզվական կոմպետենցիաների զարգացման, հմտությունների ընդլայնման, մասնագիտական զարգացման և վերապատրաստման* ծրագրերում ընդգրկված դասընթացներ:

ՉԱՓԱՆԻՇ IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ. ԵՊԼՀ-ն կարևորում է գործընկերային կապերը տեղական հաստատությունների հետ և գտել է համագործակցության եզրեր: 2010 թ. Երևանում ստորագրվել է համաձայնագիր Հայաստանի Հանրապետությունում լեզվաբանական կրթության իրականացման և լեզվաքաղաքականության մշակման բարձրագույն ուսումնական հաստատությունների ցանցային համագործակցության կոնսորցիումի ստեղծման վերաբերյալ, որին միացել են հանրապետության մի շարք բուհեր: ԵՊԼՀ-ը ռեկտորի առաջարկով հանրապետության մի շարք բուհեր միացել են նաև «Բարձրագույն կրթության ոլորտում համալսարանների համագործակցության սկզբունքների մասին երևանյան «14 կետ» հռչակագրին»: Ներհանրապետական արտաքին կապերի զարգացմանը նպաստել են կազմակերպված գիտական և գիտագործնական խորհրդաժողովները և այլ միջոցառումները: Լեզուների դասավանդման ուղղությամբ բուհը համագործակցել է հանրապետության տարբեր միջնակարգ և միջնակարգ մասնագիտական հաստատությունների հետ:

ԵՊԼՀ-ն խիստ կարևորում է միջազգայնացումը և իր Ռազմավարական ծրագրում ունի դրան նվիրված առանձին բաժին: Միջազգայնացման գործընթացը համալսարանում հիմնականում համակարգվում է միջազգային կապերի բաժնի կողմից: Անցած տարիների ընթացքում բուհը որոշակի քայլեր է կատարել արտաքին կապերի հարստացման ուղղությամբ և հասել է որոշ արդյունքների: Համալսարանը մեծ ջանքեր է գործադրում արտասահմանյան բուհերի հետ կապերի ստեղծման և պահպանման համար: ԵՊԼՀ-ն համագործակցում է մի շարք միջազգային կազմակերպությունների հետ՝ Եվրամիության, Եվրախորհրդի, ՅՈՒՆԵՍԿՕ-ի և ԱՊՀ-ի լեզվական և լեզվամշակութային քաղաքականությունը մշակող կառույցների:

ԵՊԼՀ-ի առաքելությունում նշվում է եվրաինտեգրման կարևորությունը, սակայն բուհը կապեր ունի նաև եվրասիական տարածքում և Արևելքում: Տեղական և միջազգային հաստատությունների և կառույցների հետ արդյունավետ համագործակցությանը հիմնականում խոչընդոտում է ֆինանսական ռեսուրսների անբավարարությունը: Համալսարանում դասավանդում են դասախոսներ Ավստրիայից, Իտալիայից, Իրանից: Իրանի դեսպանատան հետ համագործակցության արդյունքում ստեղծվել է իրանագիտության կաբինետ, որը համալրված է գրականությամբ: Համալսարանը համագործակցում է նաև այլ երկրների համալսարանների հետ TEMPUS-ի ծրագրերի շրջանակներում:

Համալսարանը ապահովում է ուսանողների՝ օտար լեզվի իմացության անհրաժեշտ մակարդակը: Բուհը աջակցում է ուսանողների կողմից շահած դրամաշնորհային ծրագրերով արտերկիր մեկնողներին: Օտար լեզուների իմացությանը նպաստում է այն, որ 2-րդ և 3-րդ լեզուների ուսումնառության ավարտին անցկացվում են սերտիֆիկացիոն քննություններ: ԵՊԼՀ-ն օտար լեզվի դասընթացներ է կազմակերպում դասախոսների և վարչական անձնակազմի համար, ինչը նպաստում է օտար լեզվի իմացության մակարդակի բարձրացմանը:

ՉԱՓԱՆԻՇ X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ. ԵՊԼՀ-ն կարևորում է որակի ապահովման ներքին համակարգի ներդրումը: ՈԱԿ-ի կողմից մշակվել է ՈՐԱԿ - 2015 ԵՊԼՀ Որակի ապահովման կենտրոնի ռազմավարական ծրագիրն ու գործողությունների պլանը, որը ԵՊԼՀ-ում որակի ապահովման ներքին համակարգի գործառությունը կարգավորող միասնական փաստաթուղթ է: Այն ներկայացնում է որակի ապահովման տեսանկյունից ԵՊԼՀ-ի կողմից տարվող քաղաքականությունը: ԵՊԼՀ որակի ներքին ապահովման հիմնական ընթացակարգերը և ԵՊԼՀ որակի ներքին ապահովման ձեռնարկը դեռևս մշակման փուլում են:

Որակի արտաքին գնահատման համար բավարար հիմքեր ապահովելու նպատակով հիմնադրումից անմիջապես հետո ԵՊԼՀ ՈԱԿ-ը նախաձեռնել է ինստիտուցիոնալ չափանիշների և չափորոշիչների ուղղություններով ինքնավերլուծական զեկույցների և ռազմավարական ծրագրի կատարողականի գնահատման գործընթաց:

Բավարար հիմքեր որակի ապահովման արտաքին գնահատման գործընթացների համար ՈԱԿ-ը դեռևս չի ապահովում:

ՉԱՓԱՆԻՇ I. Առաքելությունը և նպատակները.	*մասամբ բավարար*
ՉԱՓԱՆԻՇ II. Կառավարումն ու վարչարարությունը.	*մասամբ բավարար*
ՉԱՓԱՆԻՇ III. Մասնագիտության կրթական ծրագրերը.	*մասամբ բավարար*
ՉԱՓԱՆԻՇ IV. ՈՒսանողները.	*մասամբ բավարար*
ՉԱՓԱՆԻՇ V. Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմը.	*մասամբ բավարար*
ՉԱՓԱՆԻՇ VI. Հետազոտությունը և զարգացումը.	*մասամբ բավարար*
ՉԱՓԱՆԻՇ VII. Ենթակառուցվածք և ռեսուրսներ.	*մասամբ բավարար*
ՉԱՓԱՆԻՇ VIII. Հասարակական պատասխանատվությունը.	*բավարար*
ՉԱՓԱՆԻՇ IX. Արտաքին կապերը և միջազգայնացումը.	*բավարար*
ՉԱՓԱՆԻՇ X. Որակի ներքին ապահովման համակարգը.	*մասամբ բավարար*

ՎԵՐՋՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ՝

Փորձագիտական խմբի ղեկավարը և համակարգողը հայտարարում են, որ այս զեկույցը կազմված է խմբի անդամների հաշվետվությունների հիման վրա: Խումբը ուսումնասիրել է զեկույցը և համաձայն է նրանում բերված գնահատականների հետ: Խմբի անդամները հավաստում են, որ գնահատումն իրականացվել է փորձագետների անկախության սկզբունքի պահանջների համաձայն:

01.08.2013թ.

դոց. **Լիլիթ Զաքարյան**

դոց. **Մկրտիչ Այվազյան**

ՓՈՐՁՆԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻՈՆԱԼ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԸՍՏ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

I.ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: Մասնագիտական ուսումնական հաստատության (այսուհետ՝ ՄՈՒՀ) վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, որը համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին:

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ.

1.1 ԵՊԼՀ-ի կողմից ինքնավերլուծության ենթարկված ժամանակաշրջանին համապատասխանում են 2 նախորդ ռազմավարական ծրագրերը (2006-2010թթ. և 2011-2015թթ.), որոնցում ներկայացված է նաև բուհի առաքելությունը, որը բավականին ընդգրկուն է և համահունչ է ԵՊԼՀ-ի «Կանոնադրությանը»: Առաքելությունում ընդգծվում է ԵՊԼՀ-ի լեզվաբանական բուհ լինելը: 2013-2017 թթ. ռազմավարական ծրագրում բուհի առաքելությունը, նպատակներն ու խնդիրները հստակեցվել են: ԵՊԼՀ-ի առաքելության մեջ չի երևում ՈԱՇ-ին համապատասխանությունը, քանի որ այն հաստատվել է մինչև ՈԱՇ-ի հաստատումը, սակայն Ռազմավարական ծրագրում հստակ երևում է, որ բուհը կրթություն է կազմակերպում բակալավրի, մագիստրոսի և հետազոտողի կրթական մակարդակներում:

ԵՊԼՀ-ում ՄԿԾ-ները ՈԱՇ-ին համապատասխանեցնելու ուղղությամբ աշխատանքներ դեռևս չեն իրականացվում: ԵՊԼՀ-ի ռազմավարական ծրագրի և գործունեության միջև առկա են հակասություններ: ԵՊԼՀ-ն երկար տարիներ շնորհել է նաև մանկավարժի որակավորում շրջանավարտներին, սակայն հաստատության առաքելությունում մանկավարժության ոլորտը նշված չէ:

1.2 Հաստատությունը կարևորում է ներքին և արտաքին շահակիցների կարիքների վերհանումը: Երկու ռազմավարական ծրագրերն էլ լայնորեն քննարկվել են համալսարանում, և հաշվի է առնվել աշխատողների կարծիքը:

Կարիքների վերհանման արդյունքները օգտագործվել են 2013-17թթ. ռազմավարական ծրագիրը մշակելիս: 2013-17թթ. ռազմավարական ծրագիրը կազմելիս հաստատությունը արտաքին խորհրդատու է հրավիրել, որը կազմակերպել և անցկացրել է խորհրդատվություններ ուսանողների և գործատուների հետ:

1.3 Անցկացվել է ԵՊԼՀ 2006-2010թթ. ռազմավարական ծրագրի գործողությունների պլանի գնահատում ու ամփոփիչ վերլուծություն: Վերլուծությունը արվել է 2011 թվականին, այնինչ նախնական վերլուծությունը պետք է պատրաստ լիներ գոնե 2010 թվականին, որպեսզի դրա արդյունքները հաշվի առնվեին նոր Ռազնավարական ծրագիրը կազմելիս: Որպես արդյունքների գնահատման մեխանիզմ դիտարկվում են համալսարանի ռեկտորի հաշվետվությունները Գիտական և Կառավարման խորհուրդներին, դեկանների տարեկան զեկույցները ռեկտորին և Գիտական խորհրդին ու հաճախակի անցկացվող հարցումները: Սակայն հարցումներն ընդամենը գործիք են: Հստակ մեխանիզմներն ու ընթացակարգերը բացակայում են:

ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ԵՊԼՀ-ի վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը ամբողջովին չեն արտացոլված համալսարանի առաքելության մեջ: Հաստատության առաքելությունում նշված չէ մանկավարժության ոլորտը: ՈԱՇ-ի համահունչությունը արտացոլված է միայն Ռազմավարական ծրագրում, և արտահայտված չէ առաքելության մեջ: ՄԿԾ-ները ՈԱՇ-ին համապատասխանեցնելու ուղղությամբ աշխատանքներ չեն իրականացվել:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ. ԵՊԼՀ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը **ՉԱՓԱՆԻՇ 1**-ի պահանջներին **մասամբ է բավարար:**

ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ. Անհրաժեշտ է.

- հստակեցնել առաքելությունը, ապահովել առաքելության համահունչությունը ՈԱՇ-ին, ընդ որում՝ ցանկալի կլիներ ապահովել համահունչությունը նաև եվրոպական որակավորումների ազգային շրջանակին, ինչը կապահովի համալսարանի մրցունակությունը ՀՀ ՈԱՇ-ի լրամշակման և ներդրման փուլում:
- հստակեցնել առաքելության մեջ հաստատության «մանկավարժական» ուղղվածությանը վերաբերող դրույթները:
- մշակել առաքելության ու նպատակների իրականացման արդյունքների գնահատման և բարելավման հաստատված մեխանիզմներ և գործիքներ:

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործունեությունը արդյունավետ են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը՝ պահպանելով կառավարման էթիկայի կանոնները:

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ.

2.1 ԵՊԼՀ-ի կառավարման մարմինների կանոնակարգերը և աշխատակարգերը համապատասխանում են ՀՀ օրենսդրությանը: Հաստատությունը ունի հստակ կառավարման համակարգ՝ ա) կառավարման բարձրագույն մարմիններ՝ ԵՊԼՀ-ի խորհուրդ, գիտական խորհուրդ, ռեկտոր, ռեկտորատ, բ) ստորաբաժանումների կառավարման մարմիններ՝ ֆակուլտետի խորհուրդ, դեկան և այլն, որոնց իրավասությունները սահմանվում են ԵՊԼՀ կանոնադրությամբ և իրենց կանոնակարգերով: Առկա են կառավարման մարմինների ընտրության, գիտական և ուսումնական ստորաբաժանումների դեկավարների պաշտոնների զբաղեցման հստակ կարգեր: ԵՊԼՀ-ում գործում են աշխատակիցների աշխատանքի ընդունման, տեղափոխման, հեռացման, առաջխաղացման, խրախուսման ու տույժի կիրառման հստակ քաղաքականություն ու ընթացակարգեր: Սակայն ոչ բոլոր ներքին շահակիցներն են ծանոթ դրանց բովանդակությանը: ԵՊԼՀ-ն ունի անհրաժեշտ մարդկային ռեսուրսներ, բավարար ուսումնամեթոդական, գիտահետազոտական և այլ կադրային պոտենցիալ: Բուհն ունի անհրաժեշտ նյութական ռեսուրսներ: Ֆինանսական ռեսուրսների ձևավորման հիմնական աղբյուրը ուսանողների ուսման վարձավճարն է:

2.2 Ինչպես դասախոսներն, այնպես էլ ուսանողները՝ Ուսանողական խորհրդում, դեկանատներում և ամբիոններում հարցեր բարձրացնելու միջոցով, կարող են ներազդել

որոշումների կայացման վրա: Ուսանողները և դասախոսները ներկայացված են Կառավարման և Գիտական խորհուրդներում, ինչը ամրագրված է նաև կանոնադրությամբ: Դասախոսական կազմը ներգրավված է ֆակուլտետային խորհուրդներում: ԵՊԼՀ 2013-2017 թթ. Ռազմավարական ծրագրի նախագիծն ուղարկվել է բոլոր ամբիոններին մեկնաբանությունների համար, ինչպես նաև քննարկվել է Ուսանողական խորհրդի կողմից: Թափանցիկության ապահովման տեսակետից կարևոր նշանակություն ունի նաև այն հանգամանքը, որ բուհի գործընթացներին առնչվող պաշտոնական փաստաթղթերը հրապարակվում են կայքում և տարածվում բուհի ստորաբաժանումներում:

2.3 Համալսարանն ունի ռազմավարական ծրագրեր և մշտադիտարկման մեխանիզմներ, սակայն դրանք բոլորն էլ երկարաժամկետ են: Բուհը միջնաժամկետ և կարճաժամկետ պլանավորում է համարում դեկանների, ամբիոնների վարիչների, այլ ստորաբաժանումների ղեկավարների կիսամյակային և տարեկան պլանները, դրանց հաջորդող կատարողականի վերաբերյալ հաշվետվությունները և այլն: Սակայն դրանք միշտ չէ, որ անմիջապես կապված են Ռազմավարական ծրագրի հետ:

2.4 ԵՊԼՀ-ն կատարել է իր գործունեության վրա ազդող ներքին և արտաքին որոշ գործոնների ուսումնասիրություն: Այսպես, ուսումնասիրվել են բարձրագույն կրթության ոլորտին առնչվող օրենսդրական փոփոխությունները, 12–ամյա միջնակարգ կրթության անցման արդյունքում ուսանողների թվաքանակի նվազումը և դրանից բխող ֆինանսական մուտքերի կրճատումը: Սակայն անտեսվել են այնպիսի գործոններ, ինչպիսիք են ժողովրդագրական և աշխատաշուկայում տեղի ունեցող փոփոխությունները և այլ տնտեսական գործոններ, ինտելեկտուալ միջավայրը և տեխնոլոգիական փոփոխությունները:

Բուհի գործունեության վրա ազդող գործոնների ոչ լիարժեք ուսումնասիրության հետևանքով կայացվող որոշումները չեն հիմնվել հավաստի տվյալների վրա: Արտաքին որոշ գործոնների ազդեցությունը ԵՊԼՀ-ի գործունեության վրա գնահատելու արդյունքում 2011-2015թթ. ռազմավարական ծրագիրը փոփոխության է ենթարկվել և մշակվել է 2013-2017թթ. ռազմավարական ծրագիրը:

2.5 Այցի ընթացքում չհաստատվեց, որ համալսարանը որդեգրել է պլանավորում-իրականացում-գնահատում-բարելավում սկզբունքը: Կցված նյութերը հաստատում են պլանավորման, իրականացման գործընթացների առկայությունը: Մասամբ տեղի են ունենում նաև գնահատման գործընթացներ: Կատարվող բարելավումները հիմնականում հիմնված չեն գնահատման արդյունքների վրա:

2.6 ԵՊԼՀ-ում մասնագիտությունների կրթական ծրագրերի և այլ գործընթացների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը, վերլուծությունը և կիրառումը գնահատող մեխանիզմները բացակայում են: Միայն Հանրային կառավարման ՄԿԾ-ի արդյունավետության գնահատման համար ստեղծվել և կիրառվել է գնահատման փորձնական մեխանիզմ: Փորձ է արվել մշակել ծրագրի պրոֆիլը՝ թույլ և ուժեղ կողմերի հաշվառմամբ, ինչպես նաև գնահատել ուսանողների ակնկալիքների ու պատկերացումների և փաստացի կրթական ծառայությունների միջև առկա տարբերությունները: ԵՊԼՀ Որակի ապահովման կենտրոնը անցկացնում է տարբեր հարցումներ և ուսումնասիրություններ, որոնք բուհի տարբեր գործընթացների արդյունավետության գնահատման գործիք են հանդիսանում: ԵՊԼՀ-ի կողմից «Բարձրագույն կրթության համապատասխանեցումը. շրջանավարտներն ու շուկան 2011» վերնագրով խորքային վերլուծություն է կատարվել, սակայն վերլուծությունը համալսարանի գործունեության հետ կապակցված չէ: Որպես տեղեկատվության հավաքագրման

միջոց են ծառայում նաև դասալսումները, որոնք նախապես պլանավորվում են ամբիոնների կողմից, իսկ անցկացումից հետո դրանց արդյունքները քննարկվում են: Կայքում տեղեկատվություն կա բակալավրիատի և մագիստրատուրայի կրթական ծրագրերի ու դասախոսությունների, որակավորումների, ուսումնական և գնահատման ընթացակարգերի, առկա կրթական հնարավորությունների, կրթական արդյունքների մասին:

2.7 Համալսարանը հրապարակումների օբյեկտիվության երաշխիք է համարում պաշտոնական կայքում ԵՊԼՀ խորհրդի, գիտական խորհրդի և ռեկտորատի որոշումների, ռեկտորի հրամանների տեղադրումը: Կայքում տեղադրված են նաև տարբեր ստորաբաժանումների կատարողականները: Բացի այդ ԵՊԼՀ Որակի ապահովման կենտրոնը Կարիերայի կենտրոնի հետ համագործակցությամբ անցկացնում է տարբեր հարցումներ և ուսումնասիրություններ, որոնց արդյունքների մասին նույնպես տեղեկատվություն է հրապարակում պաշտոնական կայք-էջում: Դրանք պարունակում են քանակական տեղեկատվություն: Թեպետ բուհում կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին քանակական և որակական տեղեկատվության մեծ թվով հրապարակումներ կան, սակայն դրանց գնահատող մեխանիզմները բացակայում են:

ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ:

ԵՊԼՀ-ի կառավարման կառուցվածքը հստակ է ներքին շահակիցների համար: Գիտական խորհուրդը և ֆակուլտետային խորհուրդները թափանցիկ են աշխատում: Միևնույն ժամանակ տարբեր մակարդակներում կառուցվածքային տարբեր ստորաբաժանումների միջև կա փոխգործակցության բարելավման կարիք:

ԵՊԼՀ-ի կառավարման համակարգը հնարավորություն է տալիս դասախոսներին և ուսանողներին մասնակցել իրենց առնչվող որոշումների կայացմանը:

ԵՊԼՀ-ն կատարում է իր գործունեության վրա ազդող ներքին գործոնների ուսումնասիրություն, սակայն որոշումներ կայացնելիս ոչ միշտ է հիմնվում հավաքագրված տվյալների ուսումնասիրության արդյունքների վրա: Թույլ է ժողովրդագրական, աշխատաշուկայի փոփոխությունների և այլ տնտեսական գործոնների վերլուծությունը: Համալսարանը չունի «միջավայրի սկանավորման» ընթացակարգեր:

Պլանավորման, իրականացման, գնահատման և բարելավման շրջափուլը ամբողջությամբ չի գործում, քանի որ մշտադիտարկման մեխանիզմների արդյունավետությունը բարձր չէ:

Համալսարանում առկա են համապատասխան գործիքներ, որոնք թույլ են տալիս վերհանել և գնահատել ՄԿԾ-ների արդյունավետությունը: Այդ գործիքներից են անցկացվող դասալսումները, ուսանողների և դասախոսների հարցումները: Կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին քանակական և որակական տեղեկատվության գնահատող մեխանիզմների բացակայության պատճառով տեղեկատվության տարածման արդյունավետությունը հնարավոր չէ որոշել, անհնար է որոշել, թե դրանք որքանով են թարմացված, օբյեկտիվ և անկողմնակալ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ. ԵՊԼՀ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը **ՉԱՓԱՆԻՇ 2**-ի պահանջներին ***մասամբ է բավարար:***

ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ. Անհրաժեշտ է.

- համակարգել և հստակեցնել կառուցվածքային բոլոր ստորաբաժանումների արդյունավետ փոխգործակցությունը,
- մշակել միջամբիոնային և միջֆակուլտետային լավագույն փորձի փոխանակման մեխանիզմներ,
- հստակեցնել Ռազմավարական ծրագրի իրականացման ժամանակացույցը,
- ստորաբաժանումների կարճաժամկետ և միջնաժամկետ ծրագրերը բխեցնել Ռազմավարական ծրագրի իրականացման ժամանակացույցից, դրանով իսկ նպաստելով վերջինի արդյունավետ իրականացմանը,
- ուսումնասիրել և վերլուծել գործունեության վրա ազդող արտաքին գործոնները,
- մշակել պլանավորման, իրականացման, գնահատման, բարելավման արդյունավետ շրջափուլ: Շրջափուլի մշակումից անմիջապես հետո, անհրաժեշտ է նաև կազմակերպել վարչական աշխատակիցների վերապատրաստում, քանի որ արդյունավետ կառավարման համար անհրաժեշտ են ոչ միայն գործընթացը նկարագրող քաղաքականությունը և ընթացակարգերը, այլ նաև այդ փաստաթղթերը ճիշտ կիրառելու կարողություններով օժտված անձնակազմ,
- կատարելագործել տեղեկատվության վերլուծության և կիրառումը գնահատող մեխանիզմները:

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄԿԾ-երը համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և նպաստում են շարժունությանը և միջազգայնացմանը:

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ.

3.1 Բուհը ներկայացրել է «Մանկավարժություն», «Թարգմանչական գործ», «Հանրային կառավարում» ՄԿԾ-ների վերլուծությունը, որոնց պետական կրթական չափորոշիչները հաստատված չեն: Ինքնավերլուծության մեջ նշված է, որ բուհի մասնագիտությունների կրթական ծրագրերը համահունչ են առաքելությանը: «Մանկավարժություն» մասնագիտությունը բուհում երկարատև պատմություն ունի, սակայն բուհի առաքելության մեջ հստակ արտահայտված չէ: ԵՊԼՀ-ում դասընթացների մակարդակով առկա են հստակ ձևակերպված ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքներ: Այլ հարց է, որ ընդհանուր ՄԿԾ-ի մակարդակում վերջնարդյունքները ձևակերպված չեն և չի երևում դրանց համապատասխանությունը ՈԱԾ-ին: Դասախոսներից շատերը նշեցին, որ իրենց առարկայական ծրագրերը չեն համապատասխանում ՈԱԾ-ին: Ոմանց կարծիքով, քանի դեռ ՈԱԾ-ը վերանայման փուլում է, նպատակահարմար է սպասել, իսկ ՈԱԾ-ի վերահաստատումից հետո միայն փորձել համապատասխանեցնել ծրագրերը շրջանակին: Համալսարանում չկար ծրագրերը ՈԱԾ-ին համապատասխանեցնելու որևէ ընթացակարգ կամ գործընթաց:

3.2 Վերլուծությունում նշվում է և այցի ընթացքում դա հաստատվեց, որ բուհում կիրառվում են դասավանդման և ուսումնառության բազմազան մեթոդներ: Մի շարք առարկաների գծով (հիմնականում Մանկավարժության և լեզուների դասավանդման մեթոդիկայի և Կրթության կառավարման և պլանավորման ամբիոնների գծով) դասավանդման, ուսումնառության մեթոդները

և ակնկալվող արդյունքները նկարագրված են, սակայն դասախոսների հետ հանդիպումից պարզվեց, որ դա արված չէ բուհի բոլոր դասընթացների համար:

Ուսանողների կողմից դասախոսների գնահատման արդյունքները քննարկվում են ամբիոնների նիստերի ժամանակ:

3.3 Բուհում գնահատվում են հիմնականում տեսական գիտելիքները: Գոյություն ունեն ուսանողների խրախուսման և պատժման տարբեր միջոցներ, մնացորդային գիտելիքների ստուգման, հետազոտական աշխատանքների գնահատման կարգեր: ԵՊԼՀ-ն ունի գնահատման ընդհանուր սանդղակ: Նվազագույն դրական շեմը եղել է 60 միավոր, սակայն ավարտական քննությունների համար այն վերջերս իջեցվել է մինչև 50 միավոր: ԵՊԼՀ-ում դեռ չի ձևավորվել ակադեմիական ազնվության որևէ ամբողջական ըմբռնում:

3.4 ԵՊԼՀ-ի ուսանողների ու դասավանդողների շարժունությունը բարձր չէ: Բուհը արել է որոշ քայլեր Բոլոնյան հռչակագրի պահանջների ուղղությամբ, ինչպես, օրինակ, ECTS համակարգին անցումը, սակայն դա դեռևս չի նպաստում ուսանողների շարժունությանը: Միևնույն ժամանակ ԵՊԼՀ-ն քայլեր է կատարում միջազգայնացման ուղղությամբ, այդ թվում ներմուծելով արևելյան լեզուների զգալի քանակությամբ դասընթացներ: Համալսարանը միջազգայնացմանը նպաստելու համար կազմակերպում է օտար լեզուների լրացուցիչ դասընթացներ ուսանողների, դասախոսների և վարչական աշխատողների համար:

3.5 Ինքնավերլուծությունում ներկայացված երեք ՄԿԾ-ներն էլ որպես ծրագրերի մշտադիտարկման և գնահատման գործիք օգտագործել են դասալսումները և ուսանողական հարցումները: Դասալսումների միջոցով գնահատվել են դասախոսների կիրառած մեթոդները: Արդյունքները քննարկվել են ամբիոնների նիստերին: Քննարկումները թույլ են տվել տեսնել թերությունները, կատարել անհրաժեշտ շտկումներ՝ վերանայելով առարկայական նկարագիրը և դասավանդման մեթոդները: Հարցումները հնարավորություն են տվել վերհանել ուսանողների ուսումնական կարիքները և ուսումնական գործընթացի արդյունավետությունը բարձրացնող առաջարկություններ մշակել:

ԴԱՍՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

Առարկայական ծրագրերը ամբողջական են և մանրամասն նկարագրված, սակայն մասնագիտության վերջնարդյունքները նկարագրված չեն:

Բուհի մասնագիտությունների կրթական ծրագրերը հիմնականում համահունչ են առաքելությանը, սակայն պետական կրթական չափորոշիչների բացակայության պայմաններում դրանց համապատասխանությունը և մանրամասն նկարագրված լինելը՝ ըստ շնորհվող որակավորումների ակնկալվող ուսումնառության արդյունքների անհնար է որոշել:

ԵՊԼՀ-ում կիրառվում են դասավանդման բազմաթիվ մեթոդներ, ինչը միանշանակ նպաստում է ուսանողակենտրոն ուսուցմանը: Այդուհանդերձ, չնայած բուհն ունի դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականություն, անհնար է գնահատել դրանց համապատասխանությունը ՄԿԾ-ների ուսումնառության ակնկալվող արդյունքներին վերջիններիս բացակայության պատճառով:

ԵՊԼՀ-ն ունի ուսանողների գնահատման քաղաքականություն, սակայն չկա ըմբռնում, որ գնահատումը պետք է կատարվի ըստ բոլոր ելքային արդյունքների:

Ակադեմիական ազնվության խախտման համար կան պատժամիջոցներ: Բուհը քայլեր չի ձեռնարկում ուսանողներին իրազեկելու, ինչ է ակադեմիական ազնվությունը:

ՄՈՒՀ-ում առկա է մասնագիտության կրթական ծրագրերի արդյունավետության գնահատման, բարելավման քաղաքականություն, սակայն արդյունավետության գնահատման գործիքները ամբողջապես դաշտը չեն ծածկում: Առկա են բազմաթիվ գործիքներ, սակայն դրանց համադրելիությունը թույլ է:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ. ԵՊԼՀ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 3-ի պահանջներին ***մասամբ է բավարար:***

ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ. Անհրաժեշտ է

- հստակ ձևակերպել բակալավրի և մագիստրոսի ՄԿԾ-ների ակնկալվող վերջնարդյունքները և ապահովել դրանց համապատասխանությունը ՈԱՇ-ին,
- մշակել առարկաների ելքային արդյունքների գնահատման վրա հիմնված գնահատման համակարգ,
- մշակել ակադեմիական ազնվության հիմնահարցերը կանոնակարգող հստակ փաստաթուղթ,
- մշակել բենչմարքինգի իրականացման հստակ մեթոդաբանություն:

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով:

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ.

4.1. Բուհում գործում են ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության իրականացման հստակ մեխանիզմներ, որոնք իրականացվում են մրցութային հիմունքներով՝ միասնական քննությունների հայտագրումով: Բակալավրիատի մակարդակով ուսանողների ընդունելության գործառույթը վերապահված է պետությանը, մագիստրատուրայի մակարդակով այդ գործառույթն իրականացվում է ԵՊԼՀ-ի կողմից:

4.2 ԵՊԼՀ-ն ունի ուսանողների կարիքների վերհանմանը և բավարարմանը նպաստող մի շարք կարգեր: Կա առողջության կենտրոն, որը պատրաստակամ աջակցում է այն ուսանողներին, որոնք բժշկական կարիքներ ունեն: Վերջին շրջանում ԵՊԼՀ-ում մշակվել են «Ուսանողների բավարարվածության գնահատում» հարցաշարեր, կատարվել է փորձնական հարցում:

4.3 Բուհը ստեղծում է լրացուցիչ պարապմունքների կազմակերպման և խորհրդատվություն տրամադրելու հնարավորություններ՝ ուսանողների արդյունավետ ուսումնառությանը նպաստելու համար: Բացի այդ ԼՇԿ կենտրոնի կողմից տրամադրվում են լրացուցիչ դասընթացներ տարբեր լեզուներով, որոնք նույնպես ուղղված են ուսանողներին արդյունավետ ուսումնառության հնարավորություններ ստեղծելուն: Ամբիոնները կազմակերպում են լրացուցիչ պարապմունքներ, սահմանված են խորհրդատվության տրամադրման ժամանակացույցեր, ինչը հնարավորություն է տալիս ուսանողներին ստանալ ոչ միայն հավելյալ խորհրդատվություն և աջակցություն, այլև իրենց հուզող հարցերի պատասխաններ: Բացի այդ, ստեղծված է այնպիսի միջավայր, որը թույլ է տալիս ոչ միայն ֆորմալ, այլև ոչ ֆորմալ մակարդակով ապահովել տեղեկատվության հասանելիություն և գործունեության թափանցիկություն:

4.4 ԵՊԼՀ-ում սահմանված է ուսանողներին օժանդակություն և ուղղորդում տրամադրելու նպատակով վարչական աշխատակազմին դիմելու հստակ կանոնակարգ և ժամանակացույց: Նույնիսկ ամրագրված ընդունելության ժամերից դուրս վարչական կազմը, ինչպես նաև ուսումնաօժանդակ կազմը հասանելի է ուսանողներին: Ուսանողները հաստատեցին, որ դեկանատների աշխատակիցները և դասախոսները հասանելի են, ինչը հնարավորություն է տալիս մոտենալ նրանց և ստանալ անհրաժեշտ օժանդակություն:

4.5 Ուսանողների կարիերային նպաստելու համար համալսարանը ուշադրության կենտրոնում է պահում ՄԿԾ-ների արդիականացումն ու բարելավումը: Կազմակերպվում են հարցումներ՝ համապատասխան բաժիններին ներկայացնելով աշխատաշուկայի և հանրության բացահայտված պահանջները, փորձում են ապահովել համալսարանի ուսանողների, շրջանավարտների և գործատուների միջև արդյունավետ կապը: Բուհում ստեղծվել է կարիերայի կենտրոն, որը պարբերաբար կազմակերպում է գործատուների հանդիպումներ ԵՊԼՀ ուսանողների հետ: Կարիերայի կենտրոնի կողմից տրամադրվող տեղեկատվության (օր. թափուր աշխատատեղերի, կազմակերպվող միջոցառումների և այլնի մասին) հասանելիությունը ուսանողներին ապահովվում է էլ. փոստի և ֆեյսբուքյան էջի միջոցով:

4.6 ԵՊԼՀ-ի գիտահետազոտական աշխատանքներում ուսումնառողների մասնակցությունն ապահովվում է նրանց գիտական հոդվածների, գիտահետազոտական աշխատանքների հրատարակության երաշխավորմամբ և պլանավորմամբ: Այնուամենայնիվ, մշակված չէ կանոնակարգ բուհի ուսումնառողներին գիտահետազոտական դրամաշնորհների աշխատանքներին մասնակից դարձնելու համար: Ըստ էության, համալսարանում չկան հստակ մեխանիզմներ, որոնք կապահովեին ուսանողների ներգրավումը գիտահետազոտական աշխատանքներին:

4.7 ԵՊԼՀ-ում ուսումնառողների իրավունքների պաշտպանության համար պատասխանատու մարմիններն են դեկանները, ինչպես նաև ԵՊԼՀ ռեկտորը, ուսանողական խորհուրդը: Որպես իրենց իրավունքների պաշտպան ուսանողները հատկապես հաճախ էին հիշատակում դեկաններին և Ուսանողական խորհուրդը: Ուսանողական խորհրդի անդամները ակտիվորեն իրականացնում են տարբեր գործառույթներ՝ համաձայն նրանց միջև բաշխված և հստակեցված պարտականությունների և հանձնարարությունների:

4.8 Որպես ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ մատուցվող ծառայությունների գնահատման և որակի ապահովման մեխանիզմներ դիտվում են ուսանողների և շրջանավարտների հարցումները: Այդ ձևով ԵՊԼՀ-ում գնահատվում են ՄԿԾ-ները: ՈԱԿ-ը փորձնական ծրագրի սահմաններում Կրթության կառավարման և պլանավորման ամբիոնի հետ համատեղ իրականացրել է կրթության կառավարման մագիստրոսի կրթական ծրագրի գնահատում:

ԴԱՍՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

Թեպետ բուհի ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության իրականացման քաղաքականությունը մշակել է ԿԳ նախարարությունը, բուհը ձևավորել է մեխանիզմներ, որոնք նպաստում են ուսանողների հավաքագրմանը:

ԵՊԼՀ-ն ուսանողներին աջակցելու համար վարում է կրթական կարիքների վերհանման որոշակի քաղաքականություն, որն ամրագրված է ընթացակարգերում:

Ուսանողների արդյունավետ ուսումնառությանը նպաստելու համար բուհը ստեղծել է լրացուցիչ պարապմունքների կազմակերպման և խորհրդատվություն տրամադրելու

հնարավորություններ, վարչական աշխատակազմին դիմելու հստակ կանոնակարգ և ժամանակացույց, կարիերայի կենտրոն և շրջանավարտների տվյալների բազա:

Բուհում ստեղծվել են նաև ուսանողների կարիերային նպաստող ծառայություններ, սակայն դրանց արդյունավետությունը գնահատել դժվար է, քանի որ համակարգը ձևավորման փուլում է:

ԵՊԼՀ-ն աջակցում է ուսանողներին՝ ներգրավվելու հաստատության գիտահետազոտական աշխատանքներում, սակայն դա բուհի առաջնահերթություններից չէ: Կրթության և հետազոտության ոլորտները բուհում դեռևս սերտացած չեն:

Ուսանողների իրավունքները պաշտպանում են դեկանները և ԵՊԼՀ ռեկտորը, ուսանողական խորհուրդը:

Բուհում գործում են ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ մատուցվող ծառայությունների գնահատման և որակի ապահովման առանձին գործիքներ, որոնք դեռևս չեն վերածվել կայուն մեխանիզմների, չկա հետադարձ կապի մեխանիզմ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ. ԵՊԼՀ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 4-ի պահանջներին ***մասամբ է բավարար:***

ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ. Անհրաժեշտ է.

- կատարելագործել ուսանողների կարիքների վերհանման ընթացակարգերը և մեխանիզմները՝ դրանց հաղորդելով առավել համակարգված բնույթ,
- կատարելագործել օտարերկրյա ուսանողների հավաքագրման քաղաքականությունը,
- ուսանողների կարիերային նպաստելու նպատակով ՄԿԾ-ների մշակմանը ներգրավել թիրախային գործատուներին,
- մշակել մեխանիզմներ ուսանողներին բուհի գիտահետազոտական աշխատանքներում ներգրավվելու համար:

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար հաստատությունը ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով:

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ.

5.1 ԵՊԼՀ-ն ունի «Պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորման կանոնակարգ» և «Պրոֆեսորադասախոսական անձնակազմի որակի վարկանշային գնահատման կարգ»: Մասնագիտական որակների գնահատումն իրականացնելու համար որպես հետադարձ կապի մեխանիզմներ են ծառայում դասալսումները, ամբիոնի նիստում դասախոսի աշխատանքի բովանդակության քննարկումները և ուսանողների շրջանում դասախոսի վերաբերյալ անցկացրած հարցումները, նրա հրատարակած աշխատությունները, գիտաժողովների ելույթները, արտալսարանային աշխատանքները: Կրթական ծրագրերն իրականացնելու համար բուհում մշակվել է անհրաժեշտ որակավորումներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ընտրության քաղաքականություն, ձևավորվել են ընթացակարգեր:

5.2 ԵՊԼՀ-ն ունի «Պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորման կանոնակարգ», ուսումնական աշխատանքների հաշվարկի նորմեր, «ԵՊԼՀ դասախոսների վերապատրաստման և մասնագիտական զարգացման ծրագրի կազմակերպման կանոնակարգ»: Սակայն առանձին ՄԿԾ-ների համար նման կարգեր չեն սահմանված:

5.3 ԵՊԼՀ-ում դասախոսներին գնահատելու համար ուսումնական վարչությունը և ՈԱԿ-ը ուսանողների կողմից պրոֆեսորադասախոսական կազմի աշխատանքի որակի գնահատման հարցում են անցկացնում: Գործում են մի քանի այլ գործիքներ. ա) դասալսումներ, որոնց արդյունքները արձանագրվում և քննարկվում են ամբիոնների նիստերին: Այս համակարգը օգտագործվել է որակի վերահսկողության համար: բ) դասավանդման արդյունավետության և որակի վերաբերյալ ուսանողական հարցումներ, գ) անհատական հաշվետվություններ որպես դասախոսների կատարողականի գնահատման միջոց: ե) բաց դասեր և այլն:

ՄԿԾ վերջնարդյունքով հարցաթերթիկի արդյունավետության ուսումնասիրություն դեռևս չի կատարվել:

5.4 Ինքնավերլուծության մեջ նշվում է՝ «բուհը առանձին քաղաքականություն չունի և ֆինանսավորում չի հատկացնում սեփական գիտական արդյունքի առևտրայնացման ու գիտահետազոտական նոր շուկաներ գրավելու նպատակով»: ԵՊԼՀ-ն պրոֆեսորդասախոսական կազմի շրջանում չի կատարել կարիքների հատուկ վերհանում: Դասախոսական կազմի շրջանում վերապատրաստման համակարգի արդյունավետության վերաբերյալ հարցումներ չեն իրականացվել:

5.5 ԵՊԼՀ ՊԴ կազմի ցուցանիշները համապատասխանում են Լիցենզավորման պահանջներին: Ինքնավերլուծության մեջ նշվում է, որ ԵՊԼՀ ՊԴ կազմը պարբերաբար համալրվում է և զարգացնում իր մասնագիտական կարողություններն ու հմտությունները դասավանդման արդի պահանջներին համապատասխան: Համալսարանում առկա են ամբիոններ, որոնք արձանագրել են վերապատրաստման բարձր արդյունքներ, սակայն կան նաև ամբիոններ, որոնց ցուցանիշները այդ առումով բավականին ցածր են:

5.6 Բուհում դասախոսի առաջընթացը և մասնագիտական հաջողությունները չեն խրախուսվում աշխատավարձի բարձրացմամբ, աշխատավարձի փոփոխություն է լինում միայն գիտական աստիճան կամ կոչում ստանալու դեպքում:

ԵՊԼՀ-ն պրոֆեսորադասախոսական անձնակազմի մասնագիտական որակները զարգացնելու համար գիտահետազոտական աշխատանքների հրապարակման հնարավորություն է ընձեռում: Համալսարանում գործում են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման որոշակի ընթացակարգեր:

5.7 Ինքնավերլուծության մեջ ոչ մի անդրադարձ չի կատարվում ռազմավարական նպատակների իրականացման համար ուսումնաօժանդակ և վարչական աշխատակազմի բավարար թվի գնահատելու մեխանիզմներին, բայց աշխատողներն ու ուսանողները փաստեցին, որ իրենք բավարարված են համալսարանի աջակցությունից: Էլեկտրոնային ուսուցման, հրատարակման, թեստավորման և ռեսուրսների կենտրոնի կողմից կազմակերպվել են դասընթացներ ուսումնաօժանդակ անձնակազմի հետ էլեկտրոնային դասամատյաններ վարելու ու սովորողների գնահատականները մուտքագրելու վերաբերյալ:

ԴԱՍՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

ԵՊԼՀ-ում կրթական ծրագրերն իրականացնելու համար մշակվել են անհրաժեշտ որակավորումներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ընտրության

քաղաքականություն և ընթացակարգեր, սակայն բուհի յուրաքանչյուր կրթական ծրագրի համար սահմանված չեն պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող հստակ պահանջներ:

Բուհը ունի որոշակի ընթացակարգեր դասախոսական կազմի պարբերաբար գնահատման համար: Կիրառվում են ՊԴ գնահատման չափանիշներ, սակայն բացակայում է դրանց արդյունավետության գնահատումը:

Պարբերաբար իրականացվող ներքին գնահատումների արդյունքում բացահայտված կարիքներին համապատասխան՝ բուհն իրականացնում է դասավանդողների կատարելագործմանն ուղղված միջոցառումներ, սակայն դրանք դեռևս համակարգված բնույթ չեն կրում:

ԵՊԼՀ-ում գործում է դասախոսների վերապատրաստման և մասնագիտական զարգացման ծրագրի կազմակերպման կանոնակարգ: ԵՊԼՀ Շարունակական և լրացուցիչ կրթության ստորաբաժանումն արդյունավետ չի իրականացնում դասախոսների վերապատրաստման իր գործառույթը:

Բուհը աշխատում է մասնագիտությունների կրթական ծրագրերի համապատասխան պրոֆեսորադասախոսական կազմով ապահովվածության ուղղությամբ, սակայն դրա կայունությունը դեռևս երաշխավորված չէ:

Բուհում գործում են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման ընթացակարգեր, սակայն առանձին ամփոփ քաղաքականություն չկա:

Համալսարանն ունի վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմ, սակայն ԵՊԼՀ-ում խնդիր չի դրվել վերլուծելու և ուսումնասիրելու ռազմավարական նպատակների իրականացման համար վերջինիս ապահովվածությունը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ. ԵՊԼՀ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 5-ի պահանջներին ***մասամբ է բավարար:***

ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ. Անհրաժեշտ է.

- վերհանել յուրաքանչյուր ՄԿԾ-ի համար անհրաժեժշտ պրոֆեսորադասախոսական կազմին ներկայացվող պահանջները,
- ըստ կրթական ծրագրերի մշակել պրոֆեսորադասախոսական կազմին ներկայացվող հստակ պահանջներ՝ հաշվի առնելով կոնկրետ ՄԿԾ-ների առանձնահատկությունները,
- պլանավորել դասախոսների կոմպետենցիաների զարգացումը,
- մշակել ՊԴ և ուսումնաօժանդակ անձնագրի պաշտոնի անձնագրեր:

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ***ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ:***

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ.

6.1 Ռազմավարական ծրագրում արտահայտված են ԵՊԼՀ-ի առաջնահերթությունները գիտության ոլորտում: Ինքնավերլուծությունում համալսարանը ներկայացրել է ամբիոնների

գիտական հետազոտությունների պլանները, հիմնական ուղղությունները, գիտաժողովներին դասախոսների և ուսանողների մասնակցության ցուցանիշները, հրատարակված գիտական ամսագրերը, ժողովածուները և այլն: Համալսարանում առկա է հետազոտական ոլորտում իր հետաքրքրությունները և հավակնություններն արտահայտող որոշակի քաղաքականություն: Ամբիոնները հաստատում են գիտահետազոտական աշխատանքների թեմատիկան, իրականացնում են դրանց մշտադիտարկումն ու քննարկումը: Համալսարանը ընձեռնում է կայք-էջից գիտաժողովների նյութերի բեռնման հնարավորություն, ինչի միջոցով ապահովում է դրանց հասանելիությունը շահակիցների համար:

6.2 Հետազոտական գործունեության մշտադիտարկման միակ գործիքը տարեկան հաշվետվություններն են: Ընդ որում ռեկտորի տարեկան հաշվետվությունը, համալսարանի առաջընթացը չափելու միակ գործիքն է: ԵՊԼՀ-ն ունի հետազոտության ոլորտի միջնաժամկետ ու կարճաժամկետ ծրագրեր, արտահայտված դասախոսների անհատական պլանների, ինչպես նաև ամբիոնների, գիտակրթական կենտրոնների պլանների մեջ: Լիարժեք չի օգտագործվում միջազգային դրամաշնորհային ծրագրերի, այն է՝ համագործակցային ձևաչափով գիտահետազոտական և գիտամանկավարժական գործունեության համար լրացուցիչ ֆինանսավորում ստանալու ժամանակակից ռեսուրսը:

6.3 Ռազմավարական ծրագրերում ամրագրված գերակա գիտահետազոտական և գիտակրթական խնդիրները լուծելու համար կատարվել են ենթակառուցվածքային փոփոխություններ, հրավիրվել են նոր մասնագետներ, բազմազանացվել են հետազոտական մշակումները:

6.4 ԵՊԼՀ-ն իր ռազմավարական ծրագրում կարևորում է հետազոտական գործունեության միջազգայնացումը: Սակայն այս գործընթացը ոչ կանոնավոր բնույթ է կրում: Հայաստանից դուրս հրատարակված հետազոտությունների ցանկը համեմատաբար սահմանափակ է: Գիտական հետազոտությունների միջազգայնացման ուղղությամբ բուհը.

- ձևավորել է տարբեր գիտական կենտրոններ,
- շարունակական դարձնելով գիտական միջոցառումների անցկացումը՝ հնարավորինս ապահովվում է օտարերկրյա գիտնականների մասնակցությունը. 2007-2011թթ. ԵՊԼՀ-ում դասախոսություններով հանդես են եկել արտասահմանցի մի շարք գիտնականներ,
- գիտական ոլորտում միջազգային համագործակցության ապահովման նպատակով գործընկեր համալսարանների հետ կազմակերպվում են համատեղ հետազոտություններ, որոնց արդյունքները տպագրվում են միջազգային գիտական հանդեսներում:

6.5 Ինքնավերլուծության մեջ նկարագրվում է հետազոտության և դասավանդման միջև կապը: Դա նշված է որպես գերակա խնդիր: Այդ ուղղությամբ հատուկ ուշադրության են արժանանում դասախոսների գիտամեթոդական աշխատանքների պլանավորումն ու հաշվառումը, դրանց համապատասխանեցումը գիտության մակարդակին և ուսումնամեթոդական չափանիշներին, սակայն հետազոտության և դասավանդման կապը գրեթե չի ուսումնասիրվել, այն կրում է տարերային և հատվածային բնույթ: Հետազոտության և դասավանդման կապը ապահովելու մեխանիզմները չեն ստեղծվել:

ԴԱՍՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

ԵՊԼՀ-ում առկա է հետազոտական ոլորտում իր հետաքրքրությունները և հավակնություններն արտահայտող քաղաքականություն, որն արտահայտված է ռազմավարական ծրագրում: ԵՊԼՀ-ն ունի երկարաժամկետ ռազմավարություն և միջնաժամկետ ու կարճաժամկետ

ծրագրեր, որոնք որոշ չափով արտահայտում են հետազոտության ոլորտում բուհի հետաքրքրությունները և հավակնությունները, սակայն դրանք հստակեցման կարիք ունեն:

Համալսարանը գործունեություն է իրականացնում գործընկեր համալսարանների պրոֆեսորադասախոսական կազմի ներգրավման, միջազգային գրախոսվող ամսագրերում պրոֆեսորադասախոսական կազմի հոդվածների տպագրության, համատեղ գիտաժողովների կազմակերպման ուղղությամբ, սակայն չի կարելի միանշանակ փաստել, որ բավարար միջոցներ են ձեռնարկվում հետազոտական գործունեության միջազգայնացման ուղղությամբ: Հրապարակումների թիվը միջազգային գրախոսվող ամսագրերում բավականին փոքր է:

ԵՊԼՀ-ում արվում են հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման ուղղությամբ քայլեր, սակայն հստակ մեխանիզմներ այդ ուղղությամբ ձևավորված չեն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ. ԵՊԼՀ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 6-ի պահանջներին ***մասամբ է բավարար:***

ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ. Անհրաժեշտ է.

- մշակել և կիրառել գիտահետազոտական աշխատանքի արդյունավետության և արդիականության գնահատման գործիքներ,
- ապահովել հետազոտության կապը ուսումնառության հետ,
- բուհի գիտական գործունեության արդյունավետությունը բարձրացնելու համար ավելացնել համապատասխան ֆինանսական ներդրումները,
- մշակել հետազոտական գործունեության միջազգայնացման հստակ ռազմավարություն:

VII ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

ՉԱՓԱՆԻՇ: ***Համալսարանն ունի անհրաժեշտ ռեսուրսներ ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության և նպատակների արդյունավետ իրականացման համար:***

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ.

7.1 ԵՊԼՀ-ն ապահովում է ՄԿԾ-երի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայր, որը ներառում է շենքային և գույքային պայմանները, գրադարանը, տեղեկատվական և հաղորդակցական սարքավորումները, որոնք կիրառվում են դասավանդման գործընթացում: Ըստ վերլուծության արդյունքների՝ դասախոս-համակարգիչ հարաբերակցությունը կազմել է 14:1: Նույն պատկերն է գրանցվում նաև ուսումնառողների դեպքում, որոնց համար համակարգիչների հասանելիությունը կազմում է 16 րոպե մեկ օրվա ընթացքում: Համակարգչային և տեխնիկական միջոցների համալրման գործընթացը շարունակվում է: ԵՊԼՀ-ում ստեղծված են պայմաններ անվտանգության և առողջության պահպանման համար, սակայն սննդի կազմակերպման և մարզական պայմանները բարելավման կարիք ունեն: Ուսումնական միջավայրի նկատմամբ բավարարվածությունը պարզելու համար բուհում անցկացվում են ներքին շահակիցների հարցումներ:

7.2 ԵՊԼՀ-ում առկա է ֆինանսական ռեսուրսների բաշխման հստակ սահմանված գործընթաց: ԵՊԼՀ-ի ծախսերի պլանավորումը կատարվում է նպատակների իրականացման տեսանկյունից և տարեկան բյուջեի նախահաշիվ կամ կատարողական կազմելիս չի առաջնորդվում ռազմավարական գերակա ուղղություններով, դրա համար հիմք է հանդիսանում նախորդ ֆիսկալ տարվա ընթացքում կատարված ծախսերն ու ապահովված մուտքերի համամասնությունը: Յուրաքանչյուր ֆինանսական տարվա գործունեությունը ենթարկվում է պարտադիր արտաքին ֆինանսական աուդիտի, որի արդյունքները հրապարակվում են ԵՊԼՀ ինտերնետային կայքում: Գործող ՄԿԾ-ների նպատակների իրականացումն ու շարունակական կատարելագործումն ապահովող և երաշխավորող ֆինանսական միջոցների բաշխման քաղաքականության արդյունավետության գնահատման չափանիշները ոչ նորմատիվ, ոչ էլ ներքին իրավական ակտերով սահմանված չեն, ավելին, դրանց ուղղակիորեն առնչվող որևիցե վերլուծություն կամ ընթացակարգված մեխանիզմ առկա չէ: Համալսարանի եկամուտների մեծ մասը գոյանում է ուսման վարձերից: Միևնույն ժամանակ վերջին տարիներին համալսարանում փորձեր են արվում գտնել ֆինանսավորման այլ աղբյուրներ, օրինակ, փորձնական կազմակերպելով բանկային լեզվի դասընթաց և թարգմանչական բյուրոյի միջոցով հանրությանը վճարովի ծառայություններ մատուցելով: Կան նաև այլ աղբյուրներից ստացված ֆինանսներ: Դրամաշնորհային ծրագրերով ստացված ֆինանսներն օգտագործվում են նախօրոք կազմված բյուջեի նպատակային նախահաշվով: Համալսարանին հաջողվել է աջակցություն ստանալ օտարերկրյա պետությունների կառավարություններից և դեսպանատներից, ինչի շնորհիվ դասախոսներին և ուսանողներին տրամադրվող ռեսուրսները հարստացվել են: Ռեսուրսները հարստացվել են նաև տեղական բիզնեսի շնորհիվ: ԵՊԼՀ ֆինանսական ռեսուրսների բաշխման արդյունավետության գնահատման գործիքները դեռևս մշակված չեն:

7.3 ԵՊԼՀ-ում կրթական ծրագրերի գծով առանձին ֆինանսական միջոցների վերաբերյալ փաստաթղթեր չեն նախատեսվում և կրթական ծրագրի ապահովման համար առանձին ֆինանսական հատկացումներով պայմանավորված պլանավորում չի կատարվում: Չնայած գործող մասնագիտությունների կրթական ծրագրերի նպատակների իրականացումն ու շարունակականությունն ապահովող ընթացակարգերը և մեխանիզմները ֆորմալ առումով կանոնակարգված և ամրագրված չեն, սակայն դրանք ԵՊԼՀ-ում փաստացի գործում են:

7.4 ԵՊԼՀ-ում առկա ռեսուրսային բազան նպաստում է ռազմավարական պլանից բխող գործողությունների իրականացմանը: Համալասարանը լիովին ապահովված չէ անհրաժեշտ քանակի տեխնիկական միջոցներով, սակայն վերջին շրջանում այդ ուղղությամբ զգալի աշխատանքներ են տարվում: Դրա մասին են վկայում վերջին շրջանում անցկացված հարցումների արդյունքները և փորձագիտական խմբի հանդիպումները ուսանողների և աշխատակիցների հետ: Չկա ռեսուրսների համապատասխանությունը կարիքներին գնահատող համակարգ:

7.5 ԵՊԼՀ-ում գործում է «Unistudent» գնահատականների մուտքագրման և պահպանման համակարգ և ստեղծվել են տվյալների մի քանի էլեկտրոնային բազաներ.

- գիտական մասում՝ պլանավորած և կատարած գիտական աշխատանքի,
- ուսումնական մասում՝ ուսանողների թվի և նրանց առաջադիմության,
- կարիերայի կենտրոնում՝ շրջանավարտների ու գործատուների մասին:

Միաժամանակ ինքնավերլուծությունում նշվել են հետևյալ թերությունները.

1. Տեղեկատվության և փաստաթղթաշրջանառության գործընթացների կառավարման քաղաքականությունը կանոնակարգվում է ներքին փաստաթղթերով, որոնք միասնականացված չեն հայեցակարգային և ընթացակարգային մակարդակներով:
2. Լիարժեք և համապարփակ չեն օգտագործվում «Mulberry» էլեկտրոնային ներքին փաստաթղթաշարժի համակարգի գործիքային հնարավորությունները:
3. Ուսումնական գործընթացին առնչվող տվյալների հավաքագրման, դասակարգման ու օգտագործման համակարգը ապահովագրված չէ տեխնիկական խափանումներից:

Համալսարանի տարբեր ստորաբաժանումներն ունեն ուսանողների վերաբերյալ տվյալների բազաներ, որոնցից յուրաքանչյուրը ծառայում է տվյալ ստորաբաժանման նպատակներին: Բազաներում պահվող տվյալները որոշ չափով համընկնում են, միևնույն ժամանակ պարունակելով յուրահատուկ տեղեկատվություն: Այդ բազաներից յուրաքանչյուրը հասանելի չէ այլ ստորաբաժանումների համար: Գոյություն չունի ապակենտրոնացված բազաները միավորող մեխանիզմ: Չկան որակի ապահովման նպատակներով տեղեկատվության փոխանցման մեխանիզմներ:

7.6. ԵՊԼՀ-ում կա քաղաքացիական պաշտպանության կառույց: Բուհն ունի բուժսպասարկում, անվտանգության և պահնորդային ծառայություններ: ՊԴ կազմի բավարարվածության աստիճանը բուֆետի կողմից սննդի մատուցման ծառայությունից 45.8% է, բուժկետից՝ 69.7%, իսկ անվտանգության ծառայությունից՝ 84.1%: Ուսանողների բավարարվածության աստիճանը հետևյալն է. բուֆետի կողմից սննդի մատուցման ծառայություն՝ 63%, բուժկետ՝ 79% և անվտանգության կողմից մատուցվող ծառայություններ՝ 89%: Համալսարանը չի ապահովում անհրաժեշտ պայմաններ հատուկ կարիքներ ունեցող ուսանողների համար:

7.7 Որպես ռեսուրսների կիրառելության, հասանելիության և արդյունավետության գնահատման մեխանիզմներ կիրառվում են հարցումները, որոնք թույլ են տալիս միայն բացահայտելու ուսանողների և դասավանդողների բավարարվածությունն առկա ռեսուրսներից: Սակայն այդ հարցումները բավարար չեն գնահատելու համար ռեսուրսների արդյունավետությունը, կիրառելիությունը և հասանելիությունը: Չկա ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման փաստաթղթավորված գործընթաց:

ԴԱՍՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

Բուհում մեծ աշխատանք է տարվում ուսումնական միջավայրի բարելավման ուղղությամբ: ԵՊԼՀ-ն իր առաքելությունն և նպատակներն իրականացնելու համար հատկացնում է համապատասխան ֆինանսական ռեսուրսներ:

ԵՊԼՀ-ում կա ֆինանսական միջոցների բաշխման քաղաքականություն, սակայն չի իրականացվում ֆինանսական միջոցների բաշխում ըստ մասնագիտական կրթական ծրագրերի, ուստի դժվար է գնահատել ապահովվում և երաշխավորվում է արդյոք նպատակների իրականացումն ու շարունակականությունը:

Պարզ չի յուրաքանչյուր ՄԿԾ-ի համար անհրաժեշտ ռեսուրսային բազայի առկայությունը, քանի որ բուհի կողմից մշակված ՄԿԾ-ներն այդ ինֆորմացիան չեն ընդգրկում:

ԵՊԼՀ-ում ներդրված տեղեկատվության և փաստաթղթաշրջանառության գործընթացները կատարելագործման փուլում են, և հետևապես դրանց կառավարման ընթացակարգերի արդյունավետության գնահատումը նույնպես շտկման փուլում է:

ԵՊԼՀ-ն ուսումնական գործընթացի կազմակերպման համար ստեղծել է անվտանգ միաջավայր: Համալսարանում գործում է բուժկետ: Սակայն հատուկ կարիքներ ունեցող ուսանողների համար պայմանները բացակայում են:

Բուհում գործում են ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման մեխանիզմներ, որոնք լրամշակման փուլում են:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ. ԵՊԼՀ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 7-ի պահանջներին ***մասամբ է բավարար:***

ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ. Անհրաժեշտ է.

- բարելավել համալսարանի ենթակառուցվածքը՝ միջոցներ ուղղորդելով ոչ միայն համակարգչային վերազինման, այլև՝ լսարանների կահավորման ուղղությամբ,
- ստեղծել դասերի ավարտից հետո ուսանողների խմբային աշխատանքների իրականացման համար նախատեսված լսարաններ՝ ապահովված անհրաժեշտ գրականությամբ և համակարգչային տեխնիկայով,
- մշակել համապատասխան մեխանիզմներ բուհում առկա ՄԿԾ-ների իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայրի գնահատման համար,
- իրականացնել ֆինանսական ռեսուրսների տեղաբաշխման մշտադիտարկում՝ ըստ ռազմավարական զարգացման ծրագրի նպատակների և ուղղությունների,
- հատուկ կարիքներ ունեցող ուսանողներին հնարավորինս ապահովել ուսման համար արհրաժեշտ պայմաններով:

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ Ը

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն իր տրամադրած կրթության, իրականացրած հետազոտության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը և հասարակությանը:

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ.

8.1 Հաշվետվողականության կանոնադրական մեխանիզմները մշակված են և գործում են ԵՊԼՀ-ի Կառավարման խորհրդի շրջանակում: ԵՊԼՀ-ն ճանաչում և կատարում է իր պարտականությունները, սակայն այս փորձը ձևակերպված չէ կանոնադրության կամ քաղաքականության մեջ: Համալսարանը ունի այնպիսի հաշվետվողականության տեսակներ, ինչպիսիք են ֆինանսական աուդիտի հաշվետվությունները, ուսանողների մասին տվյալների տրամադրումը և որակի զեկույցը: Պետության առջև հաշվետու լինելու հանգամանքը պայմանավորված է եղել բուհի՝ որպես ՊՈԱԿ-ի գործունեությունը օրենսդրորեն կարգավորվող պարտավորություններով: Հասարակության առջև հաշվետվողականությունը ապահովելու համար ստեղծվել են ներբուհական մեխանիզմներ:

8.2 ԵՊԼՀ-ն ապահովում է իր գործունեության թափանցիկությունը ռեկտորի տարեկան հաշվետվություններով, որոնք մշտապես տեղադրվում են ԵՊԼՀ-ի կայքում: Ընթացակարգերի, գործընթացների թափանցիկությունը և հասարակությանը մատչելիությունը ապահովվում են կայքում ԵՊԼՀ-ի գործունեությունը կանոնակարգող բոլոր փաստաթղթերի հրապարակմամբ և

շահակիցներին էլեկտրոնային ծանուցմամբ: Կայքը հանդիսանում է նաև հասարակության հետ հետադարձ կապի միջոց: Իր գործունեության հրապարակայնությունն ապահովելու և հասարակության հետ հաղորդակցումն իրականացնելու համար ԵՊԼՀ-ն կիրառության մեջ է դնում նաև սոցիալական ցանցերի հնարավորությունները: ՋԼՄ-ների հետ համագործակցություն ապահովելու և այն զարգացնելու նպատակով ԵՊԼՀ-ն համագործակցության պայմանագիր է կնքել Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերության հետ:

8.3 ԵՊԼՀ-ում գործում են հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի կայուն մեխանիզմներ: Համալսարանում գործում է Հանրային կապերի բաժինը: Բուհը ակտիվ կապեր ունի դեսպանատների, դպրոցների, հասարակական կազմակերպությունների և հասարակության այլ ներկայացուցիչների հետ: Համալսարանը հրապարակում է իր առաջարկները կայքի միջոցով ոչ միայն ուսանողների, այլև լայն հանրության համար: Որպես հետադարձ կապի միջոց՝ ԵՊԼՀ-ն ստեղծել է շրջանավարտների տվյալների տեղեկատվական բազա, էլեկտրոնային հաղորդակցման համակարգ և 2007 թ. «Շրջանավարտների միություն», որը համալսարանի օժանդակությամբ ստացել է պետական գրանցում:

8.4 2010/2011 և 2011/2012 ուսումնական տարիների ընթացքում լրացուցիչ և շարունակական կրթության արդյունավետ համակարգ ներդնելու նպատակով ԵՊԼՀ-ում մշակվել են կրթական երեք՝ *լեզվական կոմպետենցիաների զարգացման, հմտությունների ընդլայնման, մասնագիտական զարգացման և վերապատրաստման* ծրագրերում ընդգրկված դասընթացներ:

Դեռևս ձևավորման ընթացքում է հմտությունների ընդլայնման ծրագիրը, սակայն 2011/2012 ուս. տարում իրականացվեց «Բանկային գործ և հաշվապահական հիմունքներ» պիլոտային ծրագիրը, որը համակցված էր մասնագիտական լեզվի ուսուցման հետ: Հանրությանը մատուցվում են ծառայություններ տարբեր լեզուների դասավանդման միջոցով: Համալսարանում գործում են բազմաթիվ կենտրոններ, որոնք հասարակությանը տրամադրում են մի շարք բազմաբնույթ ծառայություններ: Այդ կենտրոնները որպես գիտելիքի (արժեքների) փոխանցման հիմնական մեխանիզմներ ապահովում են հասարակությանը լրացուցիչ և շարունակական կրթության հնարավորությունով:

ԴԱՍՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

ԵՊԼՀ-ի հաշվետվողականությունը ապահովվում է մի շարք կարգերով: Կանոնավոր ներկայացվում են ռեկտորի ամենամյա հաշվետվությունները: Բուհն ապահովում է ընթացակարգերի, գործընթացների թափանցիկությունը և հասանելիությունը հասարակությանը: Բուհում գործում են հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի և հասարակությանը գիտելիքի (արժեքների) փոխանցման մեխանիզմներ: Համալսարանի ուսանողները ձեռնամուխ են եղել անվճար անգլերենի և այլ օտար լեզուների դասավանդմանը, ինչն, օրինակ, կարող է դիտարկվել որպես հանրությանը գիտելիքի փոխանցման միջոց:

ԵՊԼՀ գրադարանը ևս հանդես է գալիս որպես կարևոր օղակ, քանի որ այն իր դոները բացել է ոչ միայն ԵՊԼՀ ուսանողների, դասավանդողների առջև, այլև հանրության շատ ավելի լայն շրջանակների:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ. ԵՊԼՀ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 8-ի պահանջներին ***բավարարում է:***

ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ. Անհրաժեշտ է.

- մշակել հասարակության հետ կապերի հատուկ ռազմավարություն,
- ապահովել հասարակության հետ կապերի շարունակականությունը,
- պլանավորել միջոցառումները՝ բարձրացնելով գործընթացի արդյունավետությունը:

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: Արտաքին կապերի միջոցով ՄՈՒՀ-ը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը՝ նպաստելով հաստատության միջազգայնացմանը:

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ.

9.1 ԵՊԼՀ-ի Ռազմավարական ծրագրում կա միջազգայնացմանը նվիրված առանձին բաժին, որտեղ ներկայացված է ԵՊԼՀ-ի միջազգայնացման գործընթացը: Միջազգայնացման գործընթացը համալսարանում հիմնականում համակարգվում է միջազգային կապերի բաժնի կողմից: Անցած տարիների ընթացքում բուհը որոշակի քայլեր է կատարել արտաքին կապերի հարստացման ուղղությամբ, և ԵՊԼՀ-ն հասել է շոշափելի արդյունքների: Համալսարանը մեծ ջանքեր է գործադրում արտասահմանյան բուհերի հետ կապերի ստեղծման և պահպանման համար: ԵՊԼՀ-ն համագործակցում է մի շարք միջազգային կազմակերպությունների հետ՝ Եվրամիության, Եվրախորհրդի, ՅՈՒՆԵՍԿՕ-ի և ԱՊՀ-ի լեզվական և լեզվամշակութային քաղաքականությունը մշակող կառույցների:

9.2 Արտաքին կապերի բաժինն իրականացնում է շատ գործառույթներ, այդ թվում միջազգային գործունեության խթանում, և միջազգային պատվիրակներին ցույց տրվող աջակցությունը գիտաժողովներին մասնակցելու հետ կապված: Բաժինը աջակցում է ժամանող և դուրս գնացող ուսանողներին վիզայի հետ կապված հարցերով, պատասխանատու է միջազգային պայմանագրերի կնքման համար, ինչպես նաև դրանց ներքո ԵՊԼՀ այցելող աշխատակազմին օժանդակելու համար:

9.3 ԵՊԼՀ-ի առաքելությունում նշվում է եվրաինտեգրման կարևորությունը, սակայն բուհը կապեր ունի նաև եվրասիական տարածքում և Արևելքում: Միջազգային համագործակցային դաշտը դեռևս չի ստացել թիրախային հստակ քարտեզավորում, և ֆինանսական ռեսուրսները բավարար չեն, ինչի հետևանքով միջազգային պայմանագրերի որոշ մասը գործում է հատվածաբար թե՛ բովանդակային և թե՛ ժամանակային առումներով: Համալսարանը համագործակցում է տեղական և միջազգային հաստատությունների և կառույցների հետ, իրագործելով բազմաթիվ ծրագրեր: Ուշադրության է արժանի բուհի համագործակցությունը ՅՈՒՆԵՍԿՈ-ի բարձրագույն կրթության կենտրոնի՝ ՍԵՊԵՍ-ի հետ: Բուհում դասավանդում են Ավստրիայից, Իտալիայից և Իրանից ժամանած դասախոսներ: ԵՊԼՀ-ն զգալի աշխատանք է կատարել Իրանի հետ կապերի զարգացման և ընդլայնման ուղղությամբ: Այսպես ուսումնական գործընթացը հեշտացնելու նպատակով իրանցի ուսանողներին ապահովում է անգլերեն նյութերով: Իրանի դեսպանատան հետ համագործակցության արդյունքում ստեղծվել է իրանագիտության կաբինետ, որը համալրված է գրականությամբ: Համալսարանը համագործակցում է նաև այլ երկրների համալսարանների հետ TEMPUS-ի ծրագրերի շրջանակներում:

9.4 Համալսարանը ապահովում է ուսանողների՝ օտար լեզվի իմացության անհրաժեշտ մակարդակը մի քանի միջոցներով: Այսպես, բուհը աջակցում է դրամաշնորհային ծրագրերով արտերկիր մեկնող ուսանողներին, գործընթացային առումով օժանդակելով նրանց: Օտար լեզուների իմացությանը նպաստում է այն, որ 2-րդ և 3-րդ լեզուների ուսումնառության ավարտին

անցկացվում են սերտիֆիկացիոն քննություններ: ԵՊԼՀ-ն օտար լեզվի դասընթացներ է կազմակերպում դասախոսների և վարչական անձնակազմի համար, ինչը նպաստում է օտար լեզվի իմացության մակարդակի բարձրացմանը:

ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

Համալսարանում իրականացվող միջոցառումներն ըստ էության միտված են փորձի փոխանակմանը և միջազգայնացմանը: Արտաքին կապերով զբաղվող կառույցը բավականին ակտիվ գործունեություն է ծավալում այդ ուղղությամբ, ուստի ինստիտուցիոնալ առումով կարելի է փաստել, որ իրականացվող քայլերը նպաստում են հիշյալ նպատակի իրականացմանը: Համալսարանն առանձնանում է միջազգային հաստատությունների և կառույցների հետ իր ակտիվ համագործակցությամբ:

Միջազգային հաստատությունների և կառույցների հետ ԵՊԼՀ-ի ավելի արդյունավետ համագործակցության համար խոչընդոտ է հանդիսանում ֆինանսական ռեսուրսների սահմանափակությունը:

Բուհն ապահովում է ներքին շահակիցների օտար լեզվի իմացության անհրաժեշտ մակարդակ՝ միջազգայնացման արդյունավետությունը բարձրացնելու համար:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ. ԵՊԼՀ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 9-ի պահանջներին ***բավարարում է:***

ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ. Անհրաժեշտ է.

- մշակել համալսարանի միջազգայնացման հստակ քաղաքականություն, ընթացակարգեր և ռազմավարական զարգացման պլան,
- մշակել փորձի փոխանակմանը, զարգացմանը և միջազգայնացմանը նպաստող քաղաքականության ու ընթացակարգերի արդյունավետությունը գնահատող գործիքներ,
- նվազեցնել համագործակցության պայմանագրերի ոչ լիաժեք կատարման ռիսկը՝ փնտրելով ֆինանսավորման նոր աղբյուրներ:

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ.

10.1 ԵՊԼՀ-ի որակի ապահովման կառույցն առաջիններից էր հանրապետությունում: Որակի ապահովման կենտրոնի կանոնադրությունում այն ներկայացված է որպես հետազոտական կենտրոն: Բուհը խիստ կարևորում է որակի ներքին հավաստման համակարգի ներդրումը, ինստիտուցիոնալ ինքնագնահատման գործընթացների ներմուծումը՝ եվրոպական չափորոշիչների պահանջներին համապատասխան, և ՈԱԿ-ը որպես բուհի համապատասխան կառույց՝ մեծ դեր է խաղում այդ գործընթացում: ՈԱԿ-ի կողմից մշակվել է «ՈՐԱԿ - 2015» ԵՊԼՀ Որակի ապահովման կենտրոնի ռազմավարական ծրագիրն ու գործողությունների պլանը: Այն ներկայացնում է որակի ապահովման տեսանկյունից ԵՊԼՀ-ի կողմից տարվող

քաղաքականությունը: Հարկ է նշել, որ ԵՊԼՀ որակի ներքին հիմնական ընթացակարգերը և ԵՊԼՀ որակի ներքին ապահովման ձեռնարկը դեռևս մշակման փուլում են:

10.2 ԵՊԼՀ ՈԱԿ-ը հիմնվել է 2009թ. և ունեցել է միայն ղեկավարի հաստիք: 2012թ. սեպտեմբերից կենտրոնում բացվել է նաև երկու համակարգողների հաստիք: Նրանք անցկացնում են ուսանողների բավարարվածության վերաբերյալ տարաբնույթ հարցումներ: ՈԱԿ աշխատակիցները նաև պարբերաբար հանդիպում են ամբիոնների վարիչների հետ: Որակի ապահովման նպատակների իրականացման համար տրամադրվում են ֆինանսական, նյութական և մարդկային ռեսուրսներ: ԵՊԼՀ-ն չունի ծրագրային բյուջետավորման համակարգ, և որակի ապահովման համակարգին տրամադրվող առանձնացված նպատակային ֆինանսական հատկացումներ ԵՊԼՀ-ի տարեկան բյուջեում չեն նախատեսվում:

10.3 «ՈՐԱԿ-2015» ռազմավարությամբ պլանավորված է մշակել ուսանողների, դասախոսների, շրջանավարտների և գործատուների հարցումների վրա հիմնված վերլուծությունների մի համակարգ, որի միջոցով նախատեսվում է 2015թ.-ին հասնել թե՛ ներքին, թե՛ արտաքին շահակիցների կարծիքների ուսումնասիրության ներգրավմանը:

10.4 ՈԱԿ-ի կանոնադրությունը ներկայումս գտնվում է վերամշակման փուլում: ՈԱԿ-ը ստեղծման պահին կազմակերպորեն ներկառուցված է եղել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի կողմից վերահսկվող ստորաբաժանումների կառուցվածքում: Բուհը գտնում է, որ դա համապատասխանում էր այդ պահին առկա կազմակերպական մշակույթին: Ներկայումս այն ենթարկվում է անմիջականորեն բուհի ռեկտորին: ԵՊԼՀ-ում հստակ պատկերացում ՈԱԿ-ի գործառույթների վերաբերյալ չկա: Վիճակը բարելավելու համար նախատեսվել է ստեղծել խորհրդատվական խումբ, որը կքննարկի ու կառաջարկի որակավորումների շրջանակի ընդհանրական ձևաչափ և կմշակի գործողությունների ծրագիր կիրարկման ժամանակացույցի ու միջոցառումների ցանկի հետ միասին:

10.5 Որակի արտաքին գնահատման համար բավարար հիմքեր ապահովելու նպատակով հիմնադրումից անմիջապես հետո ԵՊԼՀ ՈԱԿ-ը նախաձեռնել է ինստիտուցիոնալ չափանիշների և չափորոշիչների ուղղություններով ինքնավերլուծական զեկույցների և ռազմավարական ծրագրի կատարողականի գնահատման գործընթացը:

10.6 Որակի ապահովման ներքին համակարգը ձևավորման փուլում է:

ԴԱՍՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

ԵՊԼՀ-ն ունի որակի ապահովման քաղաքականություն, իսկ ընթացակարգերը լրամշակման և հստակեցման փուլում են: Դեռևս չի ստեղծվել ներքին որակի ապահովման միասնական համակարգ, մշակված չէ որակի ապահովման ձեռնարկը:

Բուհի ղեկավարությունը ջանքեր է ներդնում որակի ներքին ապահովման գործընթացների կառավարման համար մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ տրամադրելու համար, սակայն համակարգի բացակայության հետևանքով ռեսուրսների արդյունավետ օգտագործումը վտանգված է:

ԵՊԼՀ-ի որակի ապահովման համակարգին տրամադրվող առանձնացված նպատակային ֆինանսական հատկացումներ բյուջեում չեն նախատեսվում: Կենտրոնի ղեկավարը համատեղությամբ նաև զբաղվում է ամբիոնի ղեկավարմամբ, դասավանդմամբ, ինչը բավականին դժվարեցնում է նրա կողմից որակի ապահովման կենտրոնի ղեկավարի պարտականությունների կատարումը:

Ներքին և արտաքին շահակիցները բավականաչափ ներգրավված չեն որակի ապահովման գործընթացներում: Հարցումներին ներքին շահակիցների մասնակցությունը չի կարող համարվել որակի ապահովման գործընթացներին նրանց ներգրավվածության ապացույց:

Որակի ապահովման կենտրոնը որոշ հիմքեր ապահովում է արտաքին գնահատման գործընթացների համար, սակայն որակի ապահովման համակարգի բացակայությունը խոչընդոտում է և դրանց արդյունավետությանը, և արտաքին գնահատման գործընթացներին:

Որպես թափանցիկության չափանիշ ընտրվում է բուհի կայք-էջում տեղեկատվության տեղադրումը, բայց դա բավարար չէ և չի կարող հանդիսանալ թափանցիկության ապահովման ապացույց:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ. ԵՊԼՀ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 10-ի պահանջներին ***մասամբ է բավարար:***

ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ. Անհրաժեշտ է.

- մշակել որակի ապահովման հայեցակարգ և քաղաքականություն,
- ձևավորել որակի ապահովման ներքին համակարգ, որը կհամապատասխանի ՀՀ պետական հավատարմագրման չափանիշներին և ESG չափորոշիչներին,
- մշակել որակի ապահովման ձեռնարկ,
- ապահովել ՈԱԿ-ի ֆինանսական անկախությունը և ապահովվածությունը բոլոր անհրաժեշտ նյութական միջոցներով,
- մեխանիզմներ ստեղծել շահակիցներին որակի ապահովման գործընթացներին մասնակից դարձնելու համար,
- մշակել հստակ մեխանիզմներ, որոնք թույլ կտան գնահատել և պարբերաբար վերանայել որակի ներքին ապահովման համակարգը:

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Լիլիթ Զաքարյան: 1988 թ.-ին ավարտել է Խ.Աբովյանի անվան Երևանի պետական մանկավարժական ինստիտուտը, ստանալով պատմության և սովետական իրավունքի ուսուցչի դիպլոմավորված մասնագետի որակավորում: 1993 թ.-ին ստացել է պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան, 2008 թ.-ին՝ պատմություն մասնագիտության դոցենտի գիտական կոչում: Գիտական հետազոտությունների շրջանակը ընդգրկում է Հայաստանում քաղաքական համակարգի փոխակերպմանը, քաղաքացիական հասարակության ձևավորմանը, քաղաքականության գենդերային տեսանկյուններին վերաբերվող թեմաները: Դասավանդել է Հյուսիսային համալսարանում, Խ.Աբովյանի անվան Երևանի պետական մանկավարժական համալսարանում, Սլավոնական համալսարանում: Հյուսիսային համալսարանում եղել է Իրավաբանության և լրագրության դեպարտամենտի դեկան, Լրագրության և հասարակագիտական առարկաների ամբիոնի վարիչ, Ուսումնական վարչության պետ: Այժմ աշխատում է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում որպես ավագ գիտաշխատող, Հյուսիսային համալսարանում ղեկավարում է Որակի ապահովման վարչությունը: Հյուսիսային համալսարանում 2009-2010 թթ. մասնակցել է ՈԱԱԿ-ի կազմակերպած ծրագրային փորձնական հավատարմագրման աշխատանքներին, 2012-2013 թթ.՝ ինստիտուցիոնալ փորձնական հավատարմագրման: Անցել է ՈԱԱԿ վերապատրաստումները, ՈԱԱԿ-ի փորձագիտական խմբում փորձագիտական այցեր է կատարել հանրապետության մի շարք բուհեր:

David Timms spent 37 years in full-time teaching, research and management in Leicester University (1972-74); Manchester University (1974-1990) and Bath Spa University (1991-2009). At Bath Spa he was Professor of English and Deputy Vice Chancellor. He became a freelance higher education consultant in January 2010.

From 1995-2010 he worked additionally for the UK Quality Assurance Agency for Higher Education (QAA) in a number of capacities, particularly institutional auditor/reviewer (UK and overseas) and assessor for degree-awarding powers. He also undertook advisory or consultancy roles for many UK universities, including (*inter alia*) Bristol University, UCL, Greenwich University, Nottingham Trent University, Derby University, Southampton Solent University, Worcester University, and University of Wales, Newport.

Since becoming freelance, David continued to undertake UK audits for QAA, was one of the team for the QAA overseas audit in Singapore in 2011, and one of the team of assessors for the degree-awarding powers application of the Royal Academy of Music in the same year. He was also author of QAA 'Cause for Complaint' reports on the University of Wales and St Mary's University during this period, and undertook other work for QAA protected by confidentiality agreements. David is a trained 'European Expert' for the purposes of reviews for the European Association for Quality Assurance in Higher Education (ENQA).

Other recent clients and consultancies include:

- (Bahrain) Quality Assurance Authority for Education and Training (QAAET). Review of Bahrain National University. Panel member. (2010)
- Capella University (USA). Academic due diligence review and report, preparatory to major purchase of a UK private higher education provider. (2010)
- (Irish) Higher Education and Training Awards Council (HETAC). Reviews in Limerick (chair) and Galway (secretary and report-writer). (2010-11)

- University of Wales, Chichester University, Bath Spa University, University of the West of England. Evaluations and reports on quality assurance systems, internal and collaborative. (2010-12)
- Accreditation Organisation of the Netherlands & Flanders (NVAO). Review of the Swedish National Agency for Higher Education (HSV) for renewal of ENQA membership. Secretary & report writer. (2011)
- Albania Public Accreditation Agency for Higher Education (APAAL). Report on the readiness of APAAL for ENQA membership. (World Bank funded) (2011)
- University of London. Review and report with recommendations on the University's Framework for International Programmes (with Peter Williams). (2011)
- ENQA. Review of Catalan Quality Assurance Agency (AQU) for renewal of ENQA membership. Chair. (2012)
- Catalan Quality Assurance Agency (AQU). Review of Autonomous University of Barcelona's Study Abroad Programme. Chair. (2012)
- Lithuanian Centre for Quality Assessment in Higher Education (SKVC). Review of Zemaitija College. Chair. (2012)
- Edge Hill University, Newport University, the College of Law, University of Wales Trinity St David, Bournemouth University, Bristol, Falmouth University, Ashridge Management College. Reading and commenting on self-evaluation documents, and training staff at all levels up to vice-chancellor for QAA institutional audit and review. (2010-2013)

Ելենա Երզնկյան: 1975 թ-ին ավարտել է Երևանի պետական համալսարանը, ստանալով բանասերի, անգլերեն լեզվի և գրականության ուսուցչի դիպլոմավորված մասնագետի որակավորում: 1979 թ-ին Մոսկվայում պաշտպանել է թեկնածուական ատենախոսությունը, ստանալով բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: 1984 թ.-ին նրան շնորհվել է «օտար լեզուներ» մասնագիտությամբ դոցենտի գիտական կոչում, 2008 թ.-ին՝ «լեզվաբանություն» մասնագիտությամբ պրոֆեսորի գիտական կոչում: 2012 թ.-ին պաշտպանել է դոկտորական ատենախոսությունը, ստանալով բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճան: Գիտական հետազոտությունների շրջանակը ընդգրկում է ճանաչողական լեզվաբանությանը, իմաստաբանությանը, գործաբանությանը, զուգադրական լեզվաբանությանը, օտար լեզուների դասավանդման մեթոդիկային, ինչպես նաև գիտելիքի գնահատմանը և թեստավորմանը վերաբերող թեմաները: Հեղինակ է ավելի քան 130 գիտական և գիտամեթոդական աշխատությունների, այդ թվում մենագրությունների, բառարանների, բուհական դասագրքերի: 1979 թ-ից աշխատում է Երևանի պետական համալսարանում՝ նախ որպես օտար լեզուների ամբիոնի դասախոս, 1984 թ-ից մինչև 1993 թ.՝ որպես նույն ամբիոնի դոցենտ, 1993 թ.-ից՝ որպես անգլերեն լեզվի թիվ 2 ամբիոնի վարիչ: 1995 թ.-ից՝ «Օտար լեզուները բարձրագույմ դպրոցում» գիտական աշխատությունների միջբուհական ժողովածուի գլխավոր խմբագիրն է, իսկ 2007 թ.-ից՝ նաև «Օտար լեզուները Հայաստանում» գիտամեթոդական հանդեսի գլխավոր խմբագիրը: 2012 թ. անցել է մի շարք ՈԱԱԿ վերապատրաստումներ:

Աղավնի Հակոբյան: 2001 թվականին ավարտել է Գլաձոր կառավարման համալսարանը՝ ստանալով տնտեսագետ-ֆինանսիստի որակավորում: 2005 թվականին ստացել է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիան, իսկ 2009 թվականին՝ տնտեսագիտության

դոցենտի գիտական կոչում: Գիտական հետազոտությունների շրջանակն ընդգրկում է տնտեսական մրցակցության պաշտպանությանն առնչվող թեմաները: Դասավանդել է Երևանի Գլաձոր համալսարանում, Մոսկվայի տնետսագիտության, վիճակագրության և ինֆորմատիկայի պետական համալսարանի երևանյան մասնաճյուղում, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում: Երևանի Գլաձոր համալսարանում 2007-13 թվականներին աշխատել է որպես ուսումնական մասի պետ: Այժմ աշխատում է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի արտաքին կապերի բաժնում՝ որպես գլխավոր մասնագետ: 2009-2010 թթ. մասնակցել է ՈԱԱԿ-ի կազմակերպած ծրագրային փորձնական հավատարմագրման աշխատանքներին, 2012-2013 թթ.՝ ինստիտուցիոնալ փորձնական հավատարմագրմանը: Անցել է ՈԱԱԿ վերապատրաստումներ:

Անի Գասպարյան: 2009 ից առ այսօր սովորում է Երեւանի Պետական Բժշկական Համալսարանում՝ընդհանուր բժշկության ֆակուլտետում: 2010-2012 եղել է ընդհանուր բժշկության ֆակուլտետային խորհրդի փոխնախագահ: 2010՝ Լեւոն Փառոյանի անվան կրթաթոշակառու: 2012 մասնակցել է ՈԱԱԿ ի կազմակերպած վերապատրաստումներին:

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Որակի արտաքին գնահատման փորձագիտական խմբի հնգօրյա այցի

ԵՐԵՎԱՆԻ Վ.ԲՐՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ 13-17 մայիսի 2013թ.

13.05.2013թ.

			Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1	Հանդիպում ռեկտորի հետ		9:30	9:45	15 րոպե
2	Հանդիպում ինքնավերլուծության խմբի հետ		10:00	11:50	110 րոպե
3	Հանդիպում ուսանողների հետ 10-12 ուսանող		12:00	13:25	85 րոպե
4	Ճաշ (փորձաքննության խմբի քննարկումներ)		13:30	14:25	55 րոպե
5	Հանդիպում դասախոսների հետ 10-12 դասախոս		14:30	15:55	85 րոպե
6	Փաստաթղթերի ուսումնասիրություն Կադրերի բաժին, իրավաբանական բաժին		16:00	18:00	120 րոպե

14.05.2013թ.

			Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1	Ռեսուրսների դիտարկում		10:00	11:55	115 րոպե
	Լսարանային ֆոնդ		10:00	10:15	15 րոպե
	Լաբորատորիաներ և մասնագիտական կաբինետներ		10:20	10:45	25 րոպե
	Գրադարան		10:50	11:35	45 րոպե
	Մարզադահլիճներ և մարզադաշտեր		11:40	11:55	15 րոպե
2	Հանդիպում որակի ապահովման կենտրոնի աշխատակիցների հետ		12:00	13:25	85 րոպե
3	Ճաշ (փորձաքննության խմբի քննարկումներ)		13:30	14:25	55 րոպե
4	Հանդիպում ամբիոնների վարիչների հետ		14:30	16:00	90 րոպե
5	Փաստաթղթերի ուսումնասիրություն Քարտուղարություն, Ուսանողական խորհուրդ, Ուսանողական գիտական ընկերություն		16:10	18:00	100 րոպե

15.05.2013թ.

			Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1	Հանդիպում պրոռեկտորների և դեկանների հետ		10:00	11:25	85 րոպե
2	Հանդիպում միջազգային կապերի վարչության աշխատակիցների հետ		11:30	12:55	85 րոպե
3	Ճաշ (փորձաքննության խմբի քննարկումներ)		13:00	13:55	55 րոպե
4	Հանդիպում մագիստրոսական ծրագրերի իրականացման դեպարտամենտի աշխատակիցների հետ		14:00	15:25	85 րոպե
5	Հանդիպում շարունակական և լրացուցիչ կրթության կենտրոնի և կարիերայի կենտրոնի աշխատակիցների հետ		15:30	16:55	85 րոպե
6	Փաստաթղթերի ուսումնասիրություն Ուսումնական գործընթացի համակարգման բաժին		17:00	18:00	60 րոպե

16.05.2013թ.

			Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1	Հանդիպում ուսանողների հետ 7-8 ուսանող		10:00	11:25	85 րոպե
2	Հանդիպում դասախոսների հետ 7-8 դասախոս		11:30	12:55	85 րոպե
3	Ճաշ (փորձաքննության խմբի քննարկումներ)		13:00	13:55	55 րոպե
4	Հանդիպում պրոռեկտորների և դեկանների հետ		14:00	15:25	85 րոպե
5	Հանդիպում փորձագետների կողմից ընտրված կազմի հետ		15:30	16:30	60 րոպե
6	Փաստաթղթերի ուսումնասիրություն		16:40	18:00	80 րոպե

17.05.2013թ.

			Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1	Հանդիպում փորձագետների կողմից ընտրված կազմի հետ		10:00	11:25	85 րոպե
2	Փաստաթղթերի ուսումնասիրություն		11:30	12:55	85 րոպե
3	Ճաշ (փորձաքննության խմբի քննարկումներ)		13:00	13:55	55 րոպե
4	Հանդիպում ինքնավերլուծության խմբի հետ		14:00	15:25	85 րոպե
5	Անհատական հանդիպումներ		15:30	16:30	60 րոպե
6	Հանդիպում ռեկտորի հետ		16:35	17:05	30 րոպե

Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի տնօրեն

Ռ. Թոփչյան

Երևանի Վ.Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի

Գ. Գասպարյան

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

1. ԵՊԼՀ ռազմավարական ծրագրեր
2. Գիտխորհրդի նիստերի արձանագրություններ
3. Ամբիոնների նիստերի արձանագրություններ
4. Գիտական աշխատանքների պլաններ
5. Վերապատրաստման ծրագրեր
6. Դասալսումների մատյաններ
7. Դասախոսների անձնական գործերը կադրերի բաժնում
8. Ուսանողական խորհրդի արձանագրություններ, ուսանողների դիմումներ
9. Մասնագիտությունների ուսումնական պլաններ
10. Կուրսային աշխատանքներ
11. Դիպլոմային աշխատանքներ
12. ԵՊԼՀ 2012-2013 ուս.տարվա ձմեռային քննաշրջանի արդյունքներ
13. ԵՊԼՀ «Միջազգային տուրիզմ» գիտաուսումնական կենտրոնի կանոնադրությունը:
14. ԵՊԼՀ «Միջազգային լրագրություն» գիտաուսումնական կենտրոնի կանոնադրությունը:
15. ԵՊԼՀ «Միջազգային տուրիզմ» գիտաուսումնական կենտրոնի կանոնադրությունը:
16. ԵՊԼՀ «Տեղեկատվության և հանրային հաղորդակցման տեխնոլոգիաների» գիտաուսումնական կենտրոնի գործունեության կարգ
17. ԵՊԼՀ մագիստրատուրայի գիտամեթոդական խորհրդի կարգ
18. ԵՊԼՀ մագիստրոսական ծրագրի պատասխանատուի կարգ
19. Մանկավարժության և լեզուների դասավանդման մեթոդիկայի ամբիոնի նիստերի արձանագրությունները, ամբիոնի աշխատակիցների կազմած առարկայական ծրագրերը, մեթոդական նյութերը, պորտֆոլիոները:
20. Հայագիտության ամբիոնի ուսումնական ծանրաբեռնվածության և դասաբաշխման փաստաթղթերը, աշխատանքային պլանը, գիտահետազոտական պլանները, գիտաժողովների ժողովածուները դասախոսների և ուսանողների մասնակցությամբ, ամբիոնի նիստերի արձանագրությունները, ամբիոնի աշխատակիցների կազմած առարկայական ծրագրերը, 2011-2012 ուս.տարվա արտալսարանային աշխատանքի դասախոսների հաշվետվությունները, դասախոսների հաշվետվությունները կատարած գիտական աշխատանքների վերաբերյալ, բուհի ղեկավարությանը ամբիոնի ներկայացված զեկուցագրեր:
21. ԵՊԼՀ կարիքների համար խորհրդատվական ծառայությունների մատուցման արձանագրություն
22. ԵՊԼՀ կարիքների համար խորհրդատվական ծառայությունների մատուցման վերաբերյալ մամուլում տրված հայտարարություն:
23. Պետական քննական հանձնաժողովի նախագահների հաշվետվություններ
24. Դասացուցակներ

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՅՑԵՐԸ

1. Երկու հանդիպում ռեկտորի հետ
2. Որակի ապահովման կենտրոն
3. Գրադարան
4. Կադրերի բաժին
5. Իրավաբանական բաժին
6. Ուսումնական գործընթացի համակարգման բաժին
7. Լսարաններ, լաբորատորիաներ, մասնագիտական կաբինետներ, մարզադահլիճ, մարզադաշտ
8. Հանդիպումներ ինքնավերլուծություն կատարած խմբի, պրոռեկտորների, դեկանների, ամբիոնների վարիչների, ուսանողների հետ, օտարերկրացի և հայ դասախոսների, միջազգային կապերի վարչության աշխատակիցների, շարունակական և լրացուցիչ կենտրոնի աշխատակիցների, կարիերայի կենտրոնի աշխատակիցների, շրջանավարտների միության նախագահի հետ
9. Մանկավարժության և լեզուների դասավանդման մեթոդիկայի ամբիոն
10. Հայագիտության ամբիոն
11. Ուսանողական խորհուրդ

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԵՐԸ

ՊԱՐՏԱՎՈՐԱԳԻՐ

Ես՝ Լիլիթ Զաքարյանս, հանդիսանալով փորձագիտական խմբի անդամ.

1. պարտավորվում եմ փորձաքննության ընթացքում և դրանից հետո ինձ հայտնի դարձած տեղեկատվությունը, որը համարվում է գաղտնիք մինչ դրա պաշտոնական հրապարակումը, օգտագործել միայն «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամին մատուցվող Ծառայությունների մատուցման համար:
2. Նշված պարտականությունը ներառում է հետևյալը.
   1) չգաղտնազերծել ինձ հասանելի դարձած «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի, ուսումնական հաստատությունների՝ գաղտնի տեղեկատվությունը այլ անձանց,
   2) չպատճենահանել կամ այլ կերպ չվերարտադրել կամ այլ կերպ չհրապարակել գաղտնի տեղեկատվությունը,

Ես գիտակցում եմ, որ սույն պարտավորագրով ամրագրված իմ պարտավորությունների խախտման համար կենթարկվեմ պատասխանատվության << գործող օրենսդրությամբ:

Ստորագրություն՝

ամսաթիվ 26.03.2013թ.

The Commitment on Confidentiality

I am David Timms, as a member of expert panel is obliged to:

1) Use the information, which is considered confidential unless it is officially published according to the RA Civil Code Article 141, only for the provision of services to the client during the service provision period and afterwards.

The above-mentioned obligation implies:

1. Not to reveal to third parties the confidential information made available to me by the Client.
2. Not to copy or publish the confidential information.

I realize that I will be subject to punishment according to the RA Legislation for not meeting the responsibilities stated in this Commitment.

David Timms

Signature

03 April 2013

Date

ՊԱՐՏԱՎՈՐԱԳԻՐ

Ես՝ Ելենա Երզնկյանս, հանդիսանալով փորձագիտական խմբի անդամ.

1. պարտավորվում եմ փորձաքննության ընթացքում և դրանից հետո ինձ հայտնի դարձած տեղեկատվությունը, որը համարվում է գաղտնիք մինչ դրա պաշտոնական հրապարակումը, օգտագործել միայն «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամին մատուցվող Ծառայությունների մատուցման համար:
2. Նշված պարտականությունը ներառում է հետևյալը.
   1) չգաղտնազերծել ինձ հասանելի դարձած «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի, ուսումնական հաստատությունների՝ գաղտնի տեղեկատվությունը այլ անձանց,
   2) չպատճենահանել կամ այլ կերպ չվերարտադրել կամ այլ կերպ չհրապարակել գաղտնի տեղեկատվությունը,

Ես գիտակցում եմ, որ սույն պարտավորագրով ամրագրված իմ պարտավորությունների խախտման համար կենթարկվեմ պատասխանատվության << գործող օրենսդրությամբ:

Ստորագրություն՝ Ե. Երզնկյան

ամսաթիվ 26.03.2013

ՊԱՐՏԱՎՈՐԱԳԻՐ

Ես՝ Անի Գասպարյանս, հանդիսանալով փորձագիտական խմբի անդամ.

1. պարտավորվում եմ փորձաքննության ընթացքում և դրանից հետո ինձ հայտնի դարձած տեղեկատվությունը, որը համարվում է գաղտնիք մինչ դրա պաշտոնական հրապարակումը, օգտագործել միայն «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամին մատուցվող Ծառայությունների մատուցման համար:
2. Նշված պարտականությունը ներառում է հետևյալը.
   1) չգաղտնազերծել ինձ հասանելի դարձած «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի, ուսումնական հաստատությունների՝ գաղտնի տեղեկատվությունը այլ անձանց,
   2) չպատճենահանել կամ այլ կերպ չվերարտադրել կամ այլ կերպ չհրապարակել գաղտնի տեղեկատվությունը,

Ես գիտակցում եմ, որ սույն պարտավորագրով ամրագրված իմ պարտավորությունների խախտման համար կենթարկվեմ պատասխանատվության ՀՀ գործող օրենսդրությամբ:

Ստորագրություն՝

ամսաթիվ 26.03.2013

ՊԱՐՏԱՎՈՐԱԳԻՐ

Ես՝ Աղավնի Հակոբյանս, հանդիսանալով փորձագիտական խմբի անդամ.

1. պարտավորվում եմ փորձաքննության ընթացքում և դրանից հետո ինձ հայտնի դարձած տեղեկատվությունը, որը համարվում է գաղտնիք մինչ դրա պաշտոնական հրապարակումը, օգտագործել միայն «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամին մատուցվող Ծառայությունների մատուցման համար:
2. Նշված պարտականությունը ներառում է հետևյալը.
   1) չգաղտնազերծել ինձ հասանելի դարձած «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի, ուսումնական հաստատությունների՝ գաղտնի տեղեկատվությունը այլ անձանց,
   2) չպատճենահանել կամ այլ կերպ չվերարտադրել կամ այլ կերպ չհրապարակել գաղտնի տեղեկատվությունը,

Ես գիտակցում եմ, որ սույն պարտավորագրով ամրագրված իմ պարտավորությունների խախտման համար կենթարկվեմ պատասխանատվության ՀՀ գործող օրենսդրությամբ:

Ստորագրություն՝

ամսաթիվ

26. 03. 2013թ.